



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԶԱՍԱՐԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ НАУК ИМЕНИ В.Я. БРЮСОВА

YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY OF LANGUAGES  
AND SOCIAL SCIENCES

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ  
Պրակ Ժ

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ  
ЛИТЕРАТУРЫ И КУЛЬТУРЫ  
Выпуск 10

CONTEMPORARY ISSUES  
OF WORLD LITTERATURE AND CILTURE  
Ussue 10

Լինգվա ԵՐԵՎԱՆ  
Лингва ЕРЕВАН  
Lingua Yerevan  
2018

Տպագրվում է ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:  
Печатается по решению Ученого совета ЕГУЯСН м. В.Я.Брюсова.

*Խմբագրական խորհուրդ՝*

Ն.Մ.Խաչատրյան ( <i>գլխ. խմբագիր</i> )	բ.գ.դ., պրոֆեսոր
Հ.Ա. Էդոյան	բ.գ.դ., պրոֆեսոր
Գ.Վ Եզիազարյան	բ.գ.դ., պրոֆեսոր
Վ.Հ. Գուլանյան	բ.գ.թ., դոցենտ
Ս.Վ.Ապրեսովա	բ.գ.թ., դոցենտ

*Редакционная коллегия:*

<i>Н.М.Хачатрян</i> (гл. редактор)	д.ф.н., профессор
Г.А.Эдоян	д.ф.н., профессор
Г.В.Егизарян	д.ф.н., профессор
К.Г.Гулянян	к.ф.н., доцент
С.В.Апресова	к.ф.н., доцент

*Editorial Board*

<i>N.Khachatryan</i> ( <i>Editor-in-Chief</i> )	Doctor of Sciences, Prof.
H.Edoyan	Doctor of Sciences, Prof.
G.Yeghiazaryan	Doctor of Sciences, Prof.
G. Gulanyan	Candidate of Sciences, Ass.prof.
S.Apresova	Candidate of Sciences, Ass. prof.

Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ. - Եր.:  
Լինգվա, 2018. – 274 էջ:

© Լինգվա, 2018

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ի Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի կողմից հրատարակվող, գրականության և մշակույթի պատմության ու տեսության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտական հանդեսի հերթական (10-րդ) պրակը:

Խմբագրական հանձնախմբին ներկայացված գիտական նյութերից ընտրվել և հրատարակվել են միայն այն հոդվածները, որոնք համապատասխանել են գիտական հանդեսի պահանջներին:

Խմբագրական հանձնախումբը շնորհակալություն է հայտնում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Վրաստանի և Հայաստանի գիտնականներին մասնակցության համար՝ հետագա արդյունավետ համագործակցության ակնկալիքով:

## ОТ РЕДАКЦИОННОЙ КОЛЛЕГИИ

Вниманию читателя предлагается очередной (10-ый) выпуск ежегодного научного журнала, посвященного проблемам теории и истории литературы и культуры, ежегодно публикуемого кафедрой Мировой литературы и культуры ЕГУЯСН им. В.Я.Брюсова.

Тексты научных статей, представленные в редакционную коллегию, были подвергнуты строгому отбору, и опубликованы только те из них, которые отвечают требованиям настоящего издания.

Редакционная коллегия благодарит за участие ведущих ученых из России, Франции, Грузии и Армении и надеется на дальнейшее плодотворное сотрудничество.

## **FROM THE EDITORIAL BOARD**

The reader is invited to the 10th issue of the annual scientific journal on the problems of theory and history of literature and culture, annually published by the Chair of World Literature and Culture of Brusov State University of Languages and Social Sciences.

The texts of scientific articles submitted to the editorial board were subjected to rigorous selection, and only those that meet the requirements of this publication were published.

The Editorial Board is grateful to the leading scientists from Russia, France, Georgia and Armenia for the participation and hopes for further fruitful collaboration.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ  
CONTENTS

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՂՆԵՐ  
ПРОБЛЕМЫ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ  
TOPICAL ISSUES OF ARMENIAN LITERATURE

<b>Ala Kharatyan</b>	Temporal discourse in the novel <i>King Arshak, Eunuch Drastamat</i> by Levon Khechoyan	<b>13</b>
<b>Ալա Խարատյան</b>	Ժամանակային դիսկուրսը Լ.Խեչոյանի «Արշակ Արքա Դրաստամատ Ներքինի» վեպում	
<b>Ала Харатян</b>	Временной курс в романе Л. Хечояна «Царь Аршак и Евнух Драстамат»	
<b>Սուրեն Աբրահամյան</b>	Հակոբ Սովետի «Շարականը» Ժողովածուն	<b>21</b>
<b>Сурен Абрамян Suren Abramyan</b>	Сборник Акопа Мовсеса «Шаракан» Collection of poems <i>Sharakan</i> by Hakob Movses	
<b>Манана Микадзе, Нино Квирикадзе</b>	Из истории грузино-армянских отношений: литературные персонажи, исторические перипетии (по роману Д.Демирчяна «Вардананк»)	<b>30</b>
<b>Մանանա Միկաձե Նինո Բքիրիկաձե</b>	Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից. պատմական իրադարձությունները (ըստ Դ. Դեմիրճյանի «Վարդանանքե վեպի»)	
<b>Manana Mikadze Nino Kvirikadze</b>	From the history of Armenian-Georgian relations. Historical events (based on “Vardanank” by D.Demirtchyan)	

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**  
**ПРОБЛЕМЫ МИРОВОЙ ЛИТЕРАТУРЫ**  
**TOPICAL ISSUES OF WORLD LITERATURE**

<b>Нинель Литвиненко</b>	Интерпретация литературно-художественного текста: некоторые проблемы	<b>35</b>
<b>Նինել Լիտվինենկո</b>	Գրական-գեղարվեստական տեքստի վերլուծության որոշ խնդիրներ	
<b>Ninel Litvinenko</b>	Interpretation of literary text: some issues	
<b>Мария Ненарокова</b>	Сенарии в средневековой латинской гимнографии	<b>50</b>
<b>Մարիա Նենարոկովա</b>	<i>Յամբային վեցաչափը միջնադարյան լատինական հիմնագրության մեջ</i>	
<b>Maria Nenarokova</b>	Iambic hexameter in the Medieval Latin hymnography	
<b>Juliette Vion-Dury</b>	Le nom	<b>61</b>
<b>Շյուլիետ Վիոն-Դյուրի</b>	Անունը	
<b>Жюльет Вион-Дюри</b>	Имя	
<b>Наталья Пахсарьян</b>	Марсель Пруст и роман XVIII века	<b>69</b>
<b>Natalya Paskharyan</b>	Marcel Proust and the 18th century novel	
<b>Նատալյա Պախսարյան</b>	Մարսել Պրուստը և XVIII դարի վեպը	
<b>Наталья Хачатрян</b>	Интерпретация образа Савонаролы в драмах французских неоромантиков	<b>78</b>
<b>Նատալյա Խաչատրյան</b>	Պատմական կերպարի նեոռոմանտիկական մեկնաբանությունը XIX դ.	
<b>Natalya Khatchatryan</b>	II կեսի ֆրանսիական դրամայում Neo-romantic interpretation of a historical character in the 2 <sup>nd</sup> half of the 19 <sup>th</sup> century French drama	

<b>Հասմիկ Այվազյան</b>	Արտացոլանքի արտացոլումը է.-է. Շմիդտի «Կինը հայելու մեջ» վեպում	<b>85</b>
<b>Асмик Айвазян</b>	Отражение отражения в романе Э.Э Шмитта «Женщина в зеркале»	
<b>Hasmik Ajvazyan</b>	The reflection of reflection in the novel <i>The Woman in the Mirror</i> by E.E. Schmitt	
<b>Ամալյա Սողոմոնյան</b>	Մեղքի և ազատության կոնցեպտները Ժան Պոլ Սարտրի «Սատանան և Տեր Աստվածը» պիեսում	<b>90</b>
<b>Amalya Soghomonyan</b>	The concepts of sin and freedom in the play <i>The Devil and the Good Lord</i> by Jean-Paul Sartre	
<b>Амалия Согомонян</b>	Концепции греха и свободы в пьесе Ж.-П. Сартра «Дьявол и Господь Бог»	
<b>Գայանէ Եղիազարյան</b>	Կնոջ կարծրատիպային դերերը անգլիական գրական ավանդույթում	<b>100</b>
<b>Gayane Yeghiazaryan</b>	The stereotypes of female roles in British literary tradition	
<b>Гаяне Егиазарян</b>	Стереотипы женских образов в английской литературной традиции	
<b>Карина Гулания</b>	Особенности жанровой структуры романа Дж.Барнс «Шум времени»	<b>107</b>
<b>Կարինա Գուլանյան</b>	Ջ.Բարնսի «Ժամանակի աղմուկը» վեպի ժանրային կառուցվածքի առանձնահատկությունները	
<b>Karina Gulanyan</b>	The structure and chronotope features in <i>The Noise of Time</i> by Julian Barnes	
<b>Բագրատ Ավետիսյան</b>	Ժամանակի փոխակերպումները Փ.Աքրոյդի «Հոքսմուր» վեպում	<b>113</b>
<b>Bagrat Avetisyan</b>	The transformations of time in <i>Hawksmoor</i> by Peter Ackroyd	
<b>Баграт Аветисян</b>	Трансформации времени в романе П. Акройда «Хоксмур»	

<b>Елизавета Азарова</b>	Гуманистическая традиция в повести Б.Таркингтона «Приключения Пенрода»	<b>119</b>
<b>Elisaveta Azarova</b>	Humanistic tradition in the novel <i>Penrod</i> by B. Tarkington	
<b>Ելիզավետա Ազարովա</b>	Հումանիստական ավանդույթը Բ.Թարքինգտոնի «Պենրոդի արկածները» վեպում	
<b>Анна Еганян, Эвелина Задоян</b>	Интертекстуальные временные и пространственные коллизии в творчестве Маргарет Этвуд	<b>123</b>
<b>Աննա Եգանյան Էվելինա Ջադոյան</b>	Ինտերտեքստուալ ժամանակատարածային կոլիզիաները Մազգարետ Ատվուդի ստեղծագործության մեջ	
<b>Anna Yeganyan, Evelina Zadoyan</b>	Intertextual collisions of time and space in Margaret Atwood's works.	
<b>Александр Тер-Габриелян</b>	Трансформация образа смерти в романах Ч. Диккенса «Торговый дом Домби и сын» и Э. Бронте «Грозовой перевал»	<b>130</b>
<b>Alexandre Ter-Gabrielyan</b>	The transformation of the image of death in the novels <i>Wuthering Heights</i> by E. Brontë and <i>Dombey and Son</i> by Ch. Dickens	
<b>Ալեքսանդր Տեր-Գաբրիելյան</b>	Մահվան կերպարի փոխակերպումը Է.Բրոնտեի «Մոլեգին հողմերի դարավանդը» և Զ.Դիքենսի «Դոմբին և որդին» վեպերում	
<b>Нанули Какауридзе</b>	Культ гения в литературной теории движения «Бури и натиска»	<b>146</b>
<b>Nanuli Kakauridze</b>	The cult of genius in the literary theory of <i>Sturm und drang</i>	
<b>Նանուլի Կակաուրիձե</b>	Հանճարի պաշտամունքը «Փոթորիք և գրոհ» հոսանքի գրական տեսության մեջ	



<b>Константин Мартиросян</b>	Продолжение традиций чеховской драматургии в пьесах А.Марининой Չեխովյան դրամատուրգիայի ավանդույթները Ա.Մարինինայի պիեսներում The continuation of the traditions of Chekhov's dramaturgy in A.Marinina's works	<b>160</b>
<b>Tamara Antonyan</b>	The character of Artist in Korean Literature (based on <i>Tale of a Mad Painter</i> by Kim Dong-In)	<b>167</b>
<b>Թամարա Անտոնյան</b>	Կիմ Դոն-Ինի «Խելազար գեղանկարիչը» վիպակի ստեղծագործական արանձնահատկությունները Художественные особенности новеллы Ким Тон Ина «Безумный художник»	
<b>Тамара Антонян</b>		

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐ  
ПРОБЛЕМЫ МИРОВОЙ КУЛЬТУРЫ  
TOPICAL ISSUES OF WORLD CULTURE**

<b>Андрей Ястребов Andrey Yastrebov Անդրեյ Զաս արեբով</b>	ТВ как источник новой мифологии TV as a source of new mythology Հեռուստատեսությունը որպես նոր դիցաբանություն	<b>172</b>
<b>Максим Гудков</b>	Премьерная постановка пьесы У. Сарояна «Лучшее время вашей жизни» в американском театре <i>Гилд</i> (1939)	<b>181</b>
<b>Մաքսիմ Գուդկով Maxim Gudkov</b>	Վ.Սարոյանի «Մեր կյանքի լավագույն ժամանակը» պիեսի բեմելը ամերիկյան <i>Guild</i> թատրոնում (1939) Premiere of the play <i>The Time of Your life</i> by W. Saroyan in the American Theatre <i>Guild</i> (1939)	

<b>Անի Ջանիկյան</b>	Բեմական վարագույրի դերը ֆրանսիական թատրոնում	<b>193</b>
<b>Ани Джаникян</b>	Сценическая роль занавеса во французском театре	
<b>Ani Janikyan</b>	The role of the stage curtain in French theatre	
<b>Lala Sadykhova</b>	Theatre of citizen making: Royall Tyler’s works in the context of American identity formation	<b>198</b>
<b>Лала Садыхова</b>	Театр становления гражданина: произведения Р. Тайлера в контексте формирования американской идентичности	
<b>Լալա Սադիխովա</b>	Քաղաքացու կայացման թատրոնը. Ռ.Թայլերի ստեղծագործությունները ամերիկյան ինքնության ձևավորման համատեքստում	
<b>Клара Штайн, Денис.Петренко</b>	Лингвистическая палеонтология культуры: И.Мещанинов и урартские клинообразные надписи	<b>206</b>
<b>Վլարա Շտայն Դենիս Պետրենկո</b>	Լեզվարանական պալեոնտոլոգիա. Ի.Մեչանինովը և ուրարտական արձանագրությունները	
<b>Klara Stein, Denis Petrenko</b>	Linguistic paleontology of culture: I.Mechaninov and Urartian wedge-shaped lettering	
<b>Gohar Vardumyan</b>	The Universe, Celestial bodies and phenomena in Armenian Mythology	<b>218</b>
<b>Գոհար Վարդումյան</b>	Տիեզերքը, երկնային մարմինները և երևույթները հայոց դիցարանության մեջ	
<b>Гоар Вардумян</b>	Вселенная, небесные тела и явления в армянской мифологии	

<b>Тигран Ананикян</b>	Армяне в освободительном движении Индии в 1870-74 гг.	<b>225</b>
<b>Տիգրան Անանիկյան</b>	Հայերը եվ Հնդկաստանի 1870-74 թթ. ազգային ազատագրական շարժումը	
<b>Tigran Ananikyan</b>	Armenians in 1870-74 national liberation movement in India	

<b>Գոհարիկ Խառատյան</b>	Երաժշտության միջառարկայական համատեքստում (4-րդ դասարանի օրինակով)	ուսուցումը կրթության <b>230</b>
<b>Goharik Kharatyan</b>	Music teaching in the context of interdisciplinary education (Based on the example of the 4 <sup>th</sup> grade)	
<b>Гоарик Харатян</b>	Обучение музыке в контексте интердисциплинарного образования (на примере 4-го класса)	

***ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ***  
**ПРОБЛЕМЫ ПЕРЕВОДА**  
**TRANSLATION ISSUES**

<b>Մзия Костава</b>	Օ некоторых особенностях перевода поэтического текста	<b>238</b>
<b>Mzia Kostava</b>	On some peculiarities of translation of a poetic text	
<b>Մզիա Կոստավա</b>	Պոետական տեքստի թարգմանության որոշ առանձնահատկությունների մասին	
<b>Ирина Погосян</b>	Поэзия Бальмонта в армянских переводах	<b>245</b>
<b>Իրինա Պողոսյան</b>	Կոնստանտին Բալմոնտի պոեզիան հայերեն թարգմանություններում	
<b>Irina Poghosyan</b>	Konstantin Balmond's poetry in Armenian translations	

<b>Кристина Беджаниян</b>	«Пьяный корабль» А.Рембо в армянских и русских переводах	<b>259</b>
<b>Քրիստինա Բեջանյան</b>	Ա.Ռեմբոյի «Հարբած նավը» բանաստեղծության ռուսերեն և հայերեն թարգմանությունների մասին	
<b>Kristina Bejanyan</b>	On the translation of A.Rimbaud's poem <i>The Drunken Ship</i> into Russian and Armenian	

<b>Տեղեկություններ հեղինակների մասին</b>	<b>269</b>
<b>Сведения об авторах</b>	
<b>About authors</b>	

**TEMPORAL DISCOURSE IN THE NOVEL *KING ARSHAK, EUNUCH DRASTAMAT* BY LEVON KHECHOYAN**

*Key words-* Levon Khechoyan, *King Arshak, Eunuch Drastamat, Faustus of Byzantium, temporal discourse, intertext, contratext*

**Levon Khechoyan's Model of Dialogue with History**

In order to perceive this model from our standpoint, it is essential to understand the functions of intertext. Any citation from a text is our metatext to that very text, i. e. what we have perceived-understood and how we have interpreted. What we cite and how we cite, i. e. the content and form of citation, manifest what we have taken from what we have read. M. Riffaterre defines intertext as a result of the act of reading<sup>1</sup>. Thus, in order to comprehend the contemporary value and the necessity of fictionalizing Faustus of Byzantium's history in modern world, it is indispensable to understand his metatext which in this case is Levon Khechoyan's *King Arshak, Eunuch Drastamat*, as well as all the citations that were inserted into the novel as a result of reading and begin a dialogue with the author. In such dialogue, according to U. Eco's concept of intertextual dialogue, unveiling of the previous text and its perception in the new text underlies. Previous texts are reflected in the new one in the form of various citations- from allusions, simply deliberate citations to plagiarism<sup>2</sup>. In this case we deal with deliberate citation-intertexts that help the author understand national political identity. In the interview "The blind man with bells" Levon Khechoyan gives the reasons to re-fictionalize Faustus of Byzantium's history, to begin a dialogue with him: "Writing from historical perspective will undoubtedly seem hopeless, futureless and somewhat dangerous to a modern, sensible and rational person. Nowadays, no novels about the past are written any more. But if throughout the whole history the work done by people and the system of

---

<sup>1</sup> See N. Khudoley, Intertextuality and Intertext as Phenomena of Literary Communication: Theoretical Aspect (<http://www.gramota.net/materials/3/2015/11-1/52.html> /24.10.2018/)

<sup>2</sup> U. Eco, Innovation and Repetition. Between Modern and Postmodern Aesthetics // Philosophy of Postmodernism: compilation of translations and papers. Krasiko-print, 1996, pp. 48-73.

thinking created by them exist in a complete form, as in case of the people in the US and Europe, it enables us to draw conclusions as to their and our position and significance in history. They erected cuneiform columns to mark the borders of their countries, drew maps of their territories, and now, in the era of cosmonautics, individuality and urbanization, reject kings' arguments, protest against the claim for reviewing nations' history as for them people's spirit as compared to an individual's spirit is monumental adjunct formation. They strive to save individual's soul. Our historical past is a closed system, strange as it may sound, a swamp that with every coming century appears below your homeland, city, home and neither swallows nor sets you free. The argument that used to exist in I-V, IX-XIX centuries, as existed for hundreds of year, continues to do so and together with it- the necessity to write a historical novel. In my opinion, this is fair enough as other nations' historical past might not be replete with arguments, their history might be finalized-completed, whereas ours is not completed, ours still goes on and dictates historical books, masses of people, panorama, displacements".<sup>3</sup>

The reason behind this rather long citation is to minutely study the author's interpretation, as well as introduce the audience a more detailed information about Khechoyan.

As is obvious from the citation, Levon Khechoyan still has an unresolved problem with the history of Armenia which is attributed both to its closed, hidden and yet not discovered and served to the society nature and repeated, cyclic and unfinished phase. Khechoyan's *King Arshak, Eunuch Drastamat* novel is structured around this logic. Levon Khechoyan attempts to overcome the the given truth of Faustus of Byzantium's history in order to overcome it at the threshold of the 21<sup>st</sup> century, tries to penetrate into it, begin a dialogue with him to understand it and to make it understood, to close the cycle that lasts for sixteen centuries and wouldn't take a finished and complete shape so that its era doesn't become victim of it. That given truth, in my opinion, has two inter-complementary layers- failure to form national and political identity. Where is the secret to be found? In this sense, the epigraph of the novel taken from the Bible is a noteworthy intertext: "There are three things that are stately in their stride, four that move with stately bearing: a

---

<sup>3</sup> See Nvard Aleksanian's interview "The blind man with bells" by the following link: <https://hetq.am/hy/article/4086>

lion, mighty among beasts, who retreats before nothing; a deer, a he-goat, and a king whose troops are with him”.<sup>4</sup>

In different editions of the Proverbs instead of deer there appear a horse, peacock, rooster, and the 31<sup>st</sup> line has the following versions: a king, against whom there is no rising up; a king that speaks openly among people. As is always the case with the interpretation of biblical texts, when interpreting the functions of the epigraph of the novel and those of the text, each reader might come up with a unique interpretation and as a result, an interesting variety will be woven around Khechoyan’s novel. I will consequently introduce the fruit of my reading.

Thus, Faustus of Byzantium, with the responsibility of a “witness”, tells the events of the 4<sup>th</sup> century, the reign of king Tiran and king Arshak, the stories of castration. These events are naturally novelized by Khechoyan. It goes without saying that Faustus of Byzantium is not the witness of the events but it is not a long-forgotten past which is why he tells it as a witness.

Going back to the epigraph and analyzing the quoted symbols, we will see that deer symbolizes a woman, beauty, he-goat- masculinity, valiance, but which is sacrificed, and what symbolizes a lion, is known to everybody. Khechoyan depicts how the unity of these three falls apart as a result of politics when Arshak deprives Nerses of military service and armament ordaining him a patriarch. L. Khechoyan depicts it as follows: “His henchmen- the servants and barbers, tied his feet and hands and sheared his wavy and decent hair in front of women and young ladies. There were those that cried among those that laughed, there were even those that turned cry into wail. Meanwhile, king Arshak *told* (has told in Armenian) the caged tiger: “Set him free”. And *told* (has told in Armenian) two of the soldiers to kill him. The armour-bearers with spears in the hands were standing in front of the tiger. They thrust the tiger with spears, *killed* (have killed in Armenian) it making all those that laughed and cried, and hairless Nerses, their witness” (p. 26)

It is not difficult to observe the hidden criticism of Arshak’s improvident act against the one who is strong, and later the symbolic image of that political error takes a shape which is the scene when Vasak is humiliated. It is noteworthy that in this scene the people are the ones to appraise the situation, and Khechoyan expresses it with patterns typical of eternal folk truth-wisdoms.

---

<sup>4</sup> Proverbs 30, 29:31.

“They *would* also *say*<sup>5</sup> that “He should not have been that cruel to the sparapet. Who did Nerses think he was to have made a military commander like Vasak get off the horse, hold the baton and walk in front of him? Let politics be politics, evident it is, to hold six nakharars<sup>6</sup> silk canopy over his head, they all, all those six together taken won’t make Vasak, - they said, - how could they be that mean towards commander Vasak? Such a cowardly ruler of a country means failing”. They *would say* (p. 28). We remember from Faustus of Byzantium’s History of the Armenians the fragment of conversation between Shapur and Vasak-lion-fox role play, which gives reason to feel national pride for Vasak was introduced as the lion. In my opinion, Khechoyan’s remark referred to this lion-Vasak being humiliated and the unforgivable side of it.

There is a direct connection between the criticism of internal and external political providence and the interview that reflected Khechoyan’s viewpoint on history: “With the pigeon on his head, Tiran has not listened to him, has told king Arshak: “King, be a man, your nephew Gnel was crown prince, don’t let the kingdom perish after him.” And he has come, has returned to go to his castle.

Patriarch Nerses has run after him and has shouted after him: “King Tiran, had you known the worth of the kingdom, you shouldn’t have gone blind and should have seen other’s stone monuments of a lion with the book under the lion’s paw, we are not only as powerful as a lion, but also literate sages. it is hard to love one who is ignorant””. (pp 62-63) There is an interesting artistic hue in Nerses’ image which bear contratexts- the he-goat on the one hand with the manipulation of scapegoat, on the other hand the transformation from the strong, sanctification as well as the antisaint.

The next point refers to the violation of the right of sexuality and that of harmony. First of all, it is the story of Eunuch Drastamat’s emasculation- castration and the transformation of the ruler of a state into a transmuter. Khechoyan explicitly criticizes emasculation which he considers as a warning for political emasculation against the background of the 20<sup>th</sup> century, and as a history of nakharars’ castration and its criticism against the background of the 4<sup>th</sup> century. This line can

---

<sup>5</sup> In English in order to express continuance of action Future in the Past is used in this case instead of Armenian Past Continuous.

<sup>6</sup>A title in medieval Armenia.



undoubtedly be completed with numerous details and fictional maneuvers.

How does this all eventually relate to the end of the 20<sup>th</sup> century?

### **Linguistic Discourse**

In Levon Khechoyan's *King Arshak, Eunuch Drastamat* tense forms display an important coding in syntax structure. Khechoyan makes an extensive use of Past Perfect in parallel with Past Indefinite, whereas Faustus of Byzantium's *History of the Armenians* was mainly expounded in Past Indefinite. These tense forms cipher different semantic realities. Faustus speaks about the same events as a witness as it is a recent past which has just finished. We will still speak about Faustus of Byzantium as a witness. It is a known fact that Faustus of Byzantium is a 5<sup>th</sup> century historian and did not witness these events but since the past he depicts is a recent one, he takes on the responsibility of the witness which also contains some criticism.

Levon Khechoyan intertwines the two tense forms which conveys the event temporal infinity and uncertainty typical of epic elements: "On-road caravan owners *have brought* him rumours from Armenia, they *have said*: "Eunuch Drastamat, show up on our earth, if the opportunity presents itself. Clergymen and nakharars wrangle and flood with accusation Arshak's son, king Pap." Within two days he *had reached* Armenia, *had placed* himself in the settlement of Khakh, over the head of Catholicos Nerses' coffin, with crossed arms *had listened* to the accusations of the clergymen and rebellious nakharars in the name of the deceased. He *had said*: "No way,- he *had said*,- there is no poisoning case; medicine denies that." They *have said*: "You are the interested party. Why did it happen so when catholicos went to king Pap, he was feeling lively, but suddenly weakened after he drank wine? We saw it with our own eyes when he came to the abode and took off his cassock, a dark coin-sized mark could be seen on his heart which then spread gradually and took a size of a flatcake". They *have said*: "In vain are your torments, there is no way we would believe you. You are the interested party. Besides, before leaving this world catholicos would spit curdled blood, why so?", Drastamat has replied: "Ishkhan Manetch, everything you saw is true, but what you couldn't see is what happened inside catholicos' body, how a vein in the lungs got pricked".

They *have said*: "You are making it up. You are the interested party and you are making it up". Drastamat had said: "One of your kings

eats the bread of an alien land, the other one, upon the order of emperor Valens, was stealthily made the head of the Armenian land by duke Terentius. He does not even have a royal title and will be rejected by people due to your accusations. There is reason to rejecting, though the irony of destiny has its alluring part as well. Let's think, calm down and dissect". They *have said*: "Can a Christian be dissected, especially a catholicos?" Drastamat *has asked*: "Can a king be persecuted, accused, a king who does not even have a throne when Chaldean medicine does not mention any cases of suchlike poisoning?"<sup>7</sup> (Perfect tenses were highlighted by me)

Past Perfect alienates the discourse from the author, assimilates it in infinite time, whereas Past Indefinite clarifies and makes it definite within time. "Modern linguistics from cognitive viewpoint defines the meaning expressed by the verb as a changeable quality of an object within time. In order to have cognizance of the eternal flow of time, human mind breaks time in separate segments. In language they are expressed through words, word combinations and sentences. The standpoint of their interrelation is expressed by consecutive line, and each segment in that line has its previous and following ones. This is how temporal plan emerges"<sup>8</sup>. Such temporal plan is expressed by Past Perfect tense that shows a historical durative period.

The relation with the period dating back *sixteen centuries ago* is restored by the language and its ways of expression. The way to overcome an unfinished history that lasts for sixteen centuries is the language, the structure of the linguistic tense form that the author opts for to demonstrate the starting point sixteen centuries ago and its sixteen-century duration. This is an interesting type of intertext, also dialogue, as well as discourse that enables to show the huge temporal pole, the distance, but at the same time the duration as well. This is an interesting allusion that keeps on reminding the addressee-reader that the history isn't over yet, that we still remember it, that it isn't over. As mentioned before, the aim is to write about "unfinished system". In this sense, the temporal range chosen by Levon Khechoyan is subject to analysis. Its starting point is the perfect form that expresses continuance of the events put in words. The usage of perfect forms in the novel has a rather vivid

---

<sup>7</sup> Khechoyan L. King Arshak, Eunuch Drastamat, Yerevan, Antares, 2013, pp. 21-22.

<sup>8</sup> Y. Gabrielyan, Typology of German, Yerevan, 2006, p. 55.

allusive course that showcases that Khechoyan is going to use perfect tense to talk about Faustus' past indefinite completed action as a duration. In order to understand this linguistic discourse woven with the help of perfect tense, an instant look at grammatical definitions will suffice.

According to M. Abeghian, the action expressed by Past Indefinite presupposes having witnessed the action or having been in the situation it happened (the writer is a witness or considers himself one). The Perfect tense shows an action about which the writer speaks as an observer.<sup>9</sup>

Perfect tense can show not only an action completed in the past, but also an action that is completed, *but still lasts till the act of speaking*<sup>10</sup> (highlighted by me). It goes without saying that Khechoyan is not an observer, but acts as an observer. Also, he is an observer as the historical situation repeats itself.

To sum up, we can say that Khechoyan opted for Past Perfect to depict an incomplete historical chain since that very tense form contains the huge epic cycle, anaphora and uncertain past, the past that Levon Khechoyan calls *closed past*. As seen from Khechoyan's interpretation, his objective is to understand political identity and why that political identity isn't shaped. In the political chain of Perfect tense form some essential political details of continuous historical events are mentioned that manifest that unshaped identity, i. e. they mark the *duration and continuance*.

Այա Խառատյան

### ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ԱՐՇԱԿ ԱՐՔԱ ԴՐԱՍՏԱՄԱՏ ՆԵՐՔԻՆԻ» ՎԵՊՈՒՄ

**Հիմնարարներ**՝ Լևոն Խեչոյան, «Արշակ արքա Դրաստամատ ներքինի», Փավստոս Բուզանդ, Ժամանակային դիսկուրս, ինտերտեքստ, կոնտրտեքստ:

Չողվածում վերլուծվում է Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպի ինտերտեքստուալությունը ժամանակային դիսկուրսի տեսանկյունից: Որպես մեծ ինտերտեքստ՝ դիտարկված է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», որը վեպում հեղինակին օգնում է ազգային քաղաքական ինքնությունը մեկնաբանելուն: Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպի լեզվական շարահյուսման մեջ կարևոր

<sup>9</sup> M. Abeghyan, Theory of Armenian, Yerevan, 1965, pp. 557-564.

<sup>10</sup> P. Poghosyan, Stylistic Use of Mood Forms of Verbs in Modern Armenian, Yerevan, 1959, p. 79.

կողավորում ունի վաղակատար ժամանակաձևը, իսկ Փավստոս Բուզանդը «Հայոց պատմությունը» հիմնականում շարադրում է կատարյալ անցյալով: Այս ժամանակաձևերը իմաստաբանական տարբեր իրողություններ են գաղտնագրում: Հոդվածում դիտարկված է վաղակատարի երկու հիմնական ֆունկցիա՝ անորոշությունն ու հարատևելը և օտարումը: Այն ըստ էության, ինտերտեքստի մի հետաքրքիր ձև է, որը թույլատրում է ցույց տալ ժամանակային հեռավորությունը, բայց միևնույն ժամանակ ցույց տալ նաև քաղաքական իրադարձությունների ու մտածողության տևումը: Ըստ այդմ՝ վաղակատար ժամանակի պատմական շղթայում հոլովվում են պատմական իրադարձությունների քաղաքական կարևոր մանրուքները, որոնք ապահովել են այդ չկայացածությունը, այսինքն՝ տևողությունը ապահովող այն հատկանիշներն են, որոնք հերքելի են քաղաքական կայացման հասնելու համար:

*Ала Харатян*

### **ВРЕМЕННОЙ ДИСКУРС В РОМАНЕ Л ХЕЧОЯНА «ЦАРЬ АРШАК И ЕВНУХ ДРАСТАМАТ»**

**Ключевые слова:** *Левон Хечоян, «Царь Аршак и евнух Драстамат», Павлос Бюзанд, временной дискурс, интертекст, контекст.*

В статье исследуется интертекстуальность в романе Л.Хечояна «Царь Аршак и евнух Драстамат». Аллюзии и заимствования из «Армянской истории» П.Бюзанда способствуют созданию в романе национально-исторической идентичности. В романе Хечояна используется плюсквамперфект, а в «Истории...» Бюзанда – прошедшее совершенное, что имеет семантическое значение. В статье рассматриваются две функции плюсквамперфекта – неопределенность и протяженность, а также – отчужденность. Эта глагольная форма позволяет выразить временную отдаленность, в то же время подчеркивая продолжительность политических событий.

## ՀԱԿՈՒՄ ՄՈՎՍԵՍԻ «ՇԱՐԱԿԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

*Հիմնաբառեր՝ շարական, վեռլիբր, գրական շարժում, մետաֆիզիկա*

Հակոբ Մովսեսը դեռևս «Լույս զվարթ» (2009) գրքում ասում է. «Շարական ց իմ, ես ե՞րբ պիտի այնքան լինեմ, որ գամ ու փարվեմ քո պարտեզներն, որտեղ ջրերը կարկաչում են, - իսկ այդ ո՞վ Աստծո առջև հոսի, որ չկարկաչի» և, քանի որ, «հասու չէ անձայն խոսքին», պիտի սարերը ելնի կրկին «յոթներորդ որսորդության» («Վարդապետություն»): Մովսեսի մտահաղացումը և խոստումը կախում ունեն միմյանցից այնքանով, որ հիմնում են համակարգի ներքին միասնությունը: Ուստի, երբ հրապարակվեց «Շարականը» (2016) «Յոթներորդ որսորդություն» գրքից հետո, անակնկալը կատարյալ էր բանաստեղծական խոսքի հասունության տեսանկյունից: Հակոբ Մովսեսն անցել էր Հեղիկոնը, «շարականի թամբին հեծած» հասել խոսքի այն ոլորտին, ուր այլևս լեզուն լռում է, ուր մարում և մեղեդին ծորում, գերիշխում «լեզվի լեզուն», ուր խոհն ու հայեցումը ձգտում են միասնության և հարմոնիայի, որը բնորոշ է արարչական Լոգոսին: Ուրեմն՝ «Շարականը» մի անկարելի բնագանգական թռիչք է ոչ միայն Մովսեսի պոեզիայում, այլև արդի գրական պրոցեսում, որը հիմնում է պոետական խոսքի եզակի ընկալում, որը մեկնաբանության կարիք ունի:

Դեռևս «Գրառումներում» (2015) Մովսեսը մեկնաբանում է բանաստեղծության լեզվի հնչողականության դերի իր ըմբռնումը, որը շաղկապված է հանգի և վեռլիբրի ոչ թե բարեհնչունության, այլ մեղեդային ընկալման հետ, որովհետև՝ «մեղեդին հեղվում է, հարմոնիան՝ կառուցում<sup>11</sup>»: «Հեղեղվելու» և «կառուցելու» մովսեսյան տեսանկյունը սակայն ունի իր նախապատմությունը և պատմական հիմնավորումը զարգացման տեսանկյունից: Մովսեսը սա բացատրում է երկու հիմքով՝ պատմականի հաստատման և արդիականի հակադրությամբ, որ գրական պրոցեսում դրսևորվում է արևելականության և արևմտականության միմյանց ժխտելու ընթացքով: Արևելյան բանաստեղծության մեջ, ուստի, հանգը «հեղոնիստական

<sup>11</sup> Հակոբ Մովսես, Գրառումներ, Երևան, 2015, էջ 159

գործառույթ ունի» Մովսեսի մեկնաբանությամբ, «օպիու-մային է», «հաճույք պատճառելու» և «բանաստեղծությունը զարդարելու համար է», այսինքն՝ մոնոթիթմիկ է և ոգելից, ինչը արտահայտվել է նաև մեր պոեզիայում, իսկ արևմտյան բանաստեղծության տաղաչափությունը հնչողական ֆունկցիա ունի, «ակուս-տիկական և պնևմատիկական թովումով կանչում է»՝ «ինչպես կեննեխն է իր զույգը կանչում», «ժառանգականությունը հավաստող մուրհակ է»<sup>12</sup>, հայեցային, ինչպիսին Տերյանի բանաստեղծության հանգը, որի լեզվից է ծնվել արևելահայ բանաստեղծությունը և նա է «հայոց Սինա լեռից իջեցնում հայերենի պատգամի տախտակները»<sup>13</sup>:

Լեզվի ընկալումը և բանաստեղծության տաղաչափությունը մշակութային նախա-հիմք ունեն, որն առավել բարդ է վեռլիբրի բացատրության դեպքում: Մովսեսը «Շարա-կանի» առաջին մասում իր պոեզիայի ճանապարհը անվանում է Այլ (որ կոչվում է Շնորհ), անցնելու համար հենվում է բառի վրա, ասում է՝ «բառերով եմ կռահում» և «դեռ չեմ հասել Այն աստիճանին», որովհետև «նրանք լռությունից են ճանաչում քեզ, Էական»<sup>14</sup>: Անցումը բառի ոլորտից խոսքի ոլորտ տեղի է ունենում բառի հայեցման, իմաստի ներքին «կառուցման» և շարժման հունով, որն իր անցյալը և գալիքը ըմբռնում է Լոգոսի մեջ: Մովսեսը շարժման պատմականությունը մեկնաբանում է մշակութային կանոնիկ նախահիմքով՝ անգլո-ֆրանսիականը Վուլգատայի և կաթոլիկական ավանդույթի, գերմաներենը լութերական ապականոնացման, իսկ հայերենը սուրբգրային բանահյուսա-կան տեքստերի առոգանության հետ շաղկապելով, որ «դարերի ընթացքում լեզվական տոպոլոգիայի է ենթարկել», «հայերենը դարձրել կրոնական հնչողության մի համակարգ»<sup>15</sup>: Ուրեմն՝ Լոգոսը և վեռլիբրը՝ իբրև «լեզվի/բանի տեքստ», համընկնում են: Նրանում «ռիթմը փոխարինվում է առոգանությամբ», ուստի «վեռլիբրով գրելու համար պետք է տիրապետել լեզվին», քանի որ «հանգը բանաստեղծական միավոր է, վեռլիբրը՝ լեզվա-բանաստեղծական», հետևաբար հանգը տաղաչափական միավոր է, իսկ «վեռլիբրը կապված է միայն ու միայն

---

<sup>12</sup> Նույնը, էջ 158

<sup>13</sup> Նույնը, էջ 86:

<sup>14</sup> Հակոբ Մովսես, Շարական, Երևան, 2016, էջ 12 (այսուհետև մեջբերումներ նշվելու են տեքստում՝ Շ և էջահամարը):

<sup>15</sup> Հակոբ Մովսես, Գրառումներ, Երևան, 2015, էջ 165:

տվյալ լեզվի հանճարի հետ»<sup>16</sup>: Ազատ տողը իր հնչողականությունն այնպես է «տեղադրել» հայերենի մեջ, ինչպես «եկեղեցին բնանկարի մեջ», «տոպոլոգիայի ենթարկել ըստ նրա օրգանիկայի», որ, Մովսեսի բնութագրությամբ՝ «շարականը *հայերեն* բուն վեռլիբրն է» և այդպես պետք է ընկալել գիրքը հնչական և մեղեդային իր միասնությամբ: Ուրեմն՝ Մովսեսի «Շարականն» էլ զուտ մշակության յնախահիմքի դարձն է երագում Լոգոսի/լեզվի միջոցով և, մեկնաբանելով այն որպես պոեզիայի պատմություն, հենվում է քրիստոնեական մշակույթի կանոնիկության և դասականության վրա, հակադրում արդի բանաստեղծական ընթացքի, լեզվի և մշակույթի ըմբռնմանը՝ համարելով այն ղեկադանասային: Հակադրության այս եզրով է, հետևաբար, Մովսեսը, որպես երգա-սացություն, ընկալում «Շարականը», թեև, ինչ խոսք, նախորդ ժողովածուներում էլ վեռլիբրը (եթե ոչ ամբողջական), բանաստեղծը գործածում է ազատորեն: Մակայն զուտ մշակության հիմքով է հնարավոր մեկնաբանել այս գիրքը և ոչ թե որպես շարականի ժանրային ձևավորում: Եվ եթե ժանրի կանոնիկացումը միջնադարում առկա է, ինչի հիմքը այդքան կարևոր է Մովսեսի համար, սակայն բանաստեղծը հետևողական է նախ և առաջ ոչ թե ժանրի, այլ լեզվական մշակույթի, ինչու չէ, նաև ոճավորման ընդհանրության ընկալմամբ, որի լեզվական հնարավորություններն առատորեն ժառանգել է հայ բանաստեղծությունը (ինչի օրինակները բերում է Մովսեսը Չարենցի պոեզիայում): Բայց, որպեսզի կարողանանք վերլուծել «Շարականը», պետք է հենց հակադրության պատկերով էլ սկսենք, ինչը անում է Մովսեսը՝ ասելով՝ «նորաձևությունը նույնպես դեմ է Շարակա-նին» (Շ,103), սակայն «խոսքը չի նսեմանում» և, «երբ մարդն ընկնում է, խոսքը նրան օգնում է, որ բարձրանա»՝ «բայց ոչ իբրև անթացույ, այլ եղբոր նման»(Շ,97): Եվ եթե բանաստեղծությունը հիմա (մեր օրերում) «գայթում է և գնում ամբոխի ուղեկցությամբ», ապա խոսքը փրկում է, որ կատարումն է աստծու, խոստման երկիրը Քանաանի, որ բանաստեղծության ճյուղին է թառում: Բայց քանի որ «բանաստեղծները խոսքով չեն կարող պատմել» (Շ,229), ապա բանաստեղծը «խոսքի շեմին» դիմում է անցյալի վարպետներին, որպեսզի «նրանք հուշեն այն վայրերը, որտեղ լռությունը դրված է իր պատյանում՝ իբրև ասելիքը ամենամեծ» (Շ,15): Շնորհին ահա նրանցից է գալիս, որի անունը քերականության սրբազան ձեռնարկներում կոչվում է «Լեզվի այց», որ Տերյանի շնչով է գալիս:

<sup>16</sup> Նույնը, էջ 165:

Երեսունվեց մեղոների փեթակը շալակած Մաշտոցն է առաջնեկը, սակայն Եղիշեն, Նարեկա Գրիգորը, որ «քայլ առ քայլ մոտեցավ լեզվի ջրերին», Շնորհալին, որ տեսավ «լույսը խալ ունի այտին», Մեծարենցը՝ ով «հարցրեց՝ խաչը խաչելությանն, թե՞ հարության նշան է», Վարուժանը՝ «ով լույսի հանքերը տեսավ», Թումանյանը, ում սիրտն է խփում, ինչպես «աստծո դռանը հնչող կոչնակ», Մնձուրին, Մովսիկը... Լեզվի և մտքի հրավառությունն, որոնց ներկայությամբ «... լեզուն կորցնում է իր իմաստը» (Շ,65), մինչդեռ պոեզիան փնտրում է իր որդիներին, «որոնց դեմքերին կարող է նայել (ինչպես) ինք(ն) (իր) պատկերին»(Շ,65): Բանաստեղծությունը ծնվում է «կայծակնահարության նմանությամբ» (Շ,143), բառը «նույն կրակն է», ինչպես «կայծակը՝ երկնքի վեհափառը», որ «իբ վեմերից հրեղեն իր ուղերձը հղ(ում) է ժողովրդին» (Շ,18): Բառը, սակայն, աշխարհն է, որ բացում է մեր դեմ «սրահը կյանքի», «մահը՝ իբրև կահավորանք» (Շ,31), իսկ բանաստեղծի որոնածն ինչ է. «բազում բառերի մեջ ընդամենը մի բառ» (Շ,32), որի նշանը արտույտն է, այն թռչունը, որ քաշվում է իր ձվի մեջ, որ «այնտեղից նորից ու նորովի ելի» (Շ,57): Բառն անուն է, անուն է տալիս իրերին, «ձվադրում» իրերի մեջ, սակայն, երբ բանաստեղծը հարցնում է աստծուն՝ «ինչ անուն դնեմ, Աստված», լսում է մի բան՝ «ինչ ես քեզ դրեցի» (Շ,56):

Ուրեմն՝ միայն «մեր ճարտարապետը՝ Աստված կարող է դնել անայուն կամարը գոյության» (Շ,48), ում համար տիեզերքը մեկ է, աշխարհը՝ նրա հայելին: Ահա ինչու է ասվում, որ «թեև տիեզերքը մի պատկերացմամբ անսահման է, սակայն մի այլ պատկերացմամբ այն Աստծո բերանում կարճ է և համառոտ, ընդամենը մի ասույթ» (Շ,40): Հետևապես, միայն լեզուն է և նրա բառը, որ «ողջ տիեզերքը համառոտագրելով մի զարդի կամ մի բառի՝ մահկանացուն միաժամանակ հասնում է այն ոլորտներին, որոնք անդաստանությունն են երեխայի» (Շ,71):

Մրա համանմանությամբ, Էդ. Աթայանը, վերլուծելով լեզվի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, տարբերակում է լեզվական և ոչ-լեզվական ոլորտները: «Գոյություն ունեցողն, - ինչպես ասում է, - միասնական է, բայց և տարրոշված»<sup>17</sup>: Ուստի, երբ Մովսեսն ասում է, թե ողջ տիեզերքը համառոտագրվում է մի բառի մեջ,

<sup>17</sup> Աթայան Էդ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 3:



նշանակում է, որ գոյությունը ընկալելի է համադրության մեջ, իսկ երբ նկարագրվում է աշխարհը զարդի կամ զարդանախշի արտահայտությամբ, տիեզերքը, իբրև գոյություն, «հառնում է մեր դեմ իբրև պատկերագրություն» (Շ,71), իսկ խաչքարը, որ «Դամասկոսի ճանապարհին արվեստի հափշտակությունը եղավ» (Շ,26), «ցնծության սուրբ նշանը» (Շ,27), «գործվածքը մտքի» (Շ,32), «աստնվորությունը Աստծո» (Շ,51), «Գողգոթա տանող ճանապարհի մեկնաբանը» (Շ,59), «տարածության յուրացումը զարդանախշով» (Շ,61),- խաչքարը ահա «բուն պատկերն է տիեզերքի», և «ողջ տիեզերքը դրվում է մեր դեմ՝ իբրև աստղագարդ մի խաչքար» (Շ,71):

Մովսեսի պոեզիայում, թերևս այն, ինչ հնարավոր չէ ասել, պատկերվում է զարդանախշով, տարածությունը յուրացվում է նրանով, որ և պատկեր է, լեզվական խորհրդանիշ և գոյության ընկալմամբ տարածության մետաֆորն է՝ ինչպես խաչքարը, Պոեզիան: Ուրեմն, բառի և խաչքարի միասնությունն է զարդանախշի մեջ, որ երգում է շարականը՝ հաղորդվելով խոսքին, նրա միջոցով ի հայտ գալիս, ինչպես որ նրա միջոցով է ի հայտ գալիս կյանքը, մահը, ժամանակը, որ պահպանվում է լեզվի ասացության, լեզվի անասելիության ու անվան մեջ: Բառը և պոեզիան, ուստի, միասնական են, խոսքը՝ ոլորտը բառի և պոեզիայի համադրության, ինչը հանդես է գալիս լեզվի առոգանության, ներքին ռիթմի և մեղեդու արարչության և հեղման միջոցով, որ հնարավոր է լսել բառի և հնչյունի իմաստի ընկալմամբ: Խաչքարը, հետևապես, Մովսեսի ընկալմամբ, նախաբանագրի (մշակույթի) ներկայությունն է խոսքի մեջ, որի մեկնությունը հնարավոր է բառի (ինչպես նաև՝ բառ/մետաֆորի) միջոցով, որ հիմնում է պոեզիան, լեզուն: Մեռյալները, ուստի, իբրև ժառանգություն, շնորհն են բերում, որոնք արձանագրվել են «լռության որմերին» (Շ,40) և ասում են՝ «մահն էլ է մեզ նման մահկանացու, իսկ կյանքը՝ մեզնից ավելին, - այն իրը, որը և՛ ինքն է, և՛ ինքնինը, և՛ ուսմունքը իր մասին» (Շ,121): Այնուհետև ասվածը մեկնաբանելու համար հավելում է բանաստեղծը՝ «ապրելու համար դուք դեռ չէք մեռել» (Շ,135), որ հնարավոր է ընկալել այսպես. մեռյալները կյանքի մեջ են և «մահվան մեջ է դրված հարության սերմը», որպեսզի «անգոյության սևահողի մեջ ծիլ տալով՝ նրանից դարձյալ ելնի» (Շ,152): Ուստի մահը մի «գիտելիք է», որ ծնվում է «բերանների Բերդեհեմում»՝ ինչպես բանաստեղծի շուրթին «բառը»՝ «բուն մարմինը իրի» կամ՝ «հարության մարմինը» (Շ,158): Այդպես են հասկացել մեր խաչքարագործ վարպետները, որ զարդանախշով են պատկերել տիեզերքը, այդպիսով «մատնացույց արել, որ Բանը, որը դարձյալ լույսն

է, ոչ մի այլ պատկերում չունի, բացի զարդանախշից, և որ լույսը բուն զարդանախշն է տիեզերքի» (Շ,159): Բանաստեղծը ասում է նաև, որ խաչքարը «տիեզերքի մատնահետքն է», լուրթունը «Աստծո միտքը» և, փորձելով «աստծո տնտեսությանը մոտենալ», անցնում է «շեմը», ուր խաչասերվում են նյութականն ու աննյութականը, լուծվում՝ ինչպես աղը ջրի մեջ, պատկերում «ոչինչը»՝ «գոյության չքնաղ ծաղիկը լամբակին» (Շ,150), որովհետև հարցին՝ «մի թե մահը խոչընդոտ է անմահության ճանապարհին», բանաստեղծը պատասխանում է Ղազարոսի հարությանը և ասում՝ «իբր մեռյալը ապրողի մի տեսակ է միայն» (Շ,74), և «ովքեր քայլում են մեր կողքին», ժամանակի տարափը այլևս չի թափվում նրանց գլխին, բայց նրանք չեն անհետացել, ինչպես «չանհետացաք (դուք), դիպուկ նետաձիգներ Բաբելոնի» (Շ,139), ինչպես չեն անհետանում մեր «լույսի խաս վարպետները»՝ Մաշտոցից Տերյան և մեր օրերը ...

Ուրեմն, ինչպիսի՞ շրջապատույտ է սա, որ կարող ենք հարցումով արտահայտել: Այսպես է Մովսեսը հարցնում.«Մահը ջնջում է ժամանակը: Թե՞ այդ ժամանակն է, որ ջնջում է մահը» («Գրառումներ 2» Ե., 2017, էջ91): Ինչպես ասում է Դերիդան՝ մահը շնորհ է, մահվան ակնթարթը այն պահը, երբ եսը համապատասխանում է ինքը իրեն: Իսկ Մովսեսը հավելում է՝ «մարդկանցից ոչ ոք իր կյանքում չի հանդիսանում ամբողջովին այնպիսին, ինչպիսին նա կա: Ինքն ինքը՝ իբրև այդպիսին՝ նա դառնում է միայն մահվանից հետո» («Գրառումներ 2», Ե., 2017, էջ 85): Ուստի մահն ամբողջացումն է եսի, գոյաբանական հիմք ունի, որ կարող է ոչ թե բաժանում լինել, այլ, ինչպես բանաստեղծն է ասում՝ էութենականացում, որն արտահայտվում է «ոգի» բառի մեջ, որ «մտածում է ամբողջ մարդուն» (նույնը, էջ 86): Այսինքն՝ պահպանվում է եականը, իրական մարդը, նրա լինելը-լինելությունը: Հետևապես՝ մահը այն թաքնվածությունն է (Հայդեգերն ասում է՝ «ալաթեյա»), որ, ինչպես կինը, «ճշմարտությունը ի հայտ է բերում երկակի»: Այսինքն այնպես, որ, ինչպես Մովսեսն է ասում, ««ալաթեյան» տեսնելու համար աչքերդ դեռ պետք է բացվեն, իսկ «վերիտասի» համար դրանք միշտ բաց են» («Գրառումներ 2», Ե., 2017, էջ 72): Ինչը նշանակում է կեցության սահմանը մահն է, գոյությանը՝ լինելությունը և խոսքը: Կարելի է ասել նաև, որ մահը այն գիտելքն է, որն, ըստ Պլատոնի, նշանակում է վերհիշել... Ուստի «մահվան հետքը» այն նախասկզբի մեջ է, ուր եսի ամբողջությունը տրոհված չէ, այսինքն՝ գոյության միասնության մեջ է, որ ոգին է պահպանում (բանաստեղծի մեկնաբանությամբ՝ պահել նշանակում է նաև՝ թաքցնել և վերհիշել): Շրջապատույտը, հետևաբար,

թաքնվածի և նրանով արտահայտվածի ի հայտ գալու իմաստի մեջ է, որը չի կարող ջնջել ներկան, անցյալը և գալիքը, որ գոյության իպոստասաներն են, լույսը՝ նրա «գարդանախշը»... Ուստի, ինչու չասել կամ կրկնել Բանաստեղծին, «մահն էլ մեզ նման մահկանցու է, իսկ կյանքը՝ մեզնից ավելին» (Շ,121), որովհետև մեր խաչքարագործ վարպետները «մահը իբրև ողջություն ընկալեցին» (Շ,26), որովհետև «խոսքի ծնունդը ավետված է ոչ թե երկնքում, այլ բերանի Բեթղեհեմում» (Շ, 121) և մեզ ծածկագիր այն տողն է տրված, ինչն ասում է՝ «նա մեր բերաններում դրեց բառը, և այն մեզ կմաքրի» (Շ,121): Ահա ինչու ասված է արդեն՝ «ունայնություն ունայնութեանց...» կամ, որ նույնն է՝ «հեբել հեբելիմ»...

«Իր այս ժառանգության շնորհիվ նախ ինքը ճանաչվեց», - իբրև բնաբան մեջբերում է Մովսեսը Նարեկացու խոսքը, անցնում տեղավայրեր՝ Էջմիածին, Արմավիր, Նորատուս, Աշոցք՝ կերտելու Բանաստեղծության հայրենիքը, երկիրը լեզվի, բարձրանում լեռը՝ պատգամի քարե տախտակները բերելու, երկրի «գմրուխտ սարերը հանում ժողովրդին», որպեսզի, ինչպես ժողովուրդը, «իր իմացածները պատկերի» (Շ,179): Մովսեսի «Շարականի» խոսքն էլ, ինչպես հոսող առվակներ, «հավաքվում»-ամբողջանում է, կարծրանում է լեզվի մեջ, ժողովվում ասույթի և պատկերի մեջ՝ «վիճարկելով սահմանները մեր տարածքների» (պոեզիայի և լեզվի տարածքների):

Մովսեսի պոեզիան, անշուշտ, մշակութային-գեղագիտական նախահիմքով երկխոսական է, որ խոսքի ոլորտի հրավեր է՝ «ինչը՝ հունական գրքերում խնջույք է անվանված», երկխոսության ծավալումը՝ զուտ պլատոնյան (սիմպոսիոնական-ը նրա), որ Մովսեսի պոեզիայում «արվեստ քերթությունն է» սահմանում, ժողովում ասելիքը, ինչպես «Գիրք Ժողովողն» է անում ... Այդպես էր «Գիրք ծաղկմանում» «Երկխոսություն» բանաստեղծությունը, «Լույս զվարթում»՝ «Վարդապետությունը», «Շարականում»՝ «Երկխոսություն» պոեմը, որ գիրքն է ժողովում: Մովսեսի բանաստեղծական ընկալումը ամբողջական է, խնջույքը կատարյալ «Երկխոսության» մեջ, ուր աղերսում է կրկին, բանաստեղծորեն հլու ասում՝ «թույլ տուր ներս մտնել բառի բնակարան», իջնում է «գուրը լեզվի»՝ «մտածելու այն լռությունը, որում հազարամյակների ընթացքում հանքն է ձևավորվում» (Շ,198-199), որովհետև բանաստեղծները «տիրոջ շներն են, որոնք հոտոտում են դրանք»՝ «բառեղեն իրերը», գոյության կանչում իրը՝ բառի հոգին: Ինչպես կուղբը, որ փորում է շարունակ, շերամը՝ հյուսում, մեղուն, որ հրեշտակի «հրամանով թռավ և երկիր իջավ», այդպես

բառերն են, որ թառել են կյանքի և մահվան կրծքին, բացում են դռները գոյության՝ ինչպես բանաստեղծությունն է բացում դռները տարածության:

«Չարիքը նախագիծ է. ես նույնիսկ կասեմ, որ դա նախագծային գործունեության հիմքն է ու նպատակը: Ինչ վերաբերում է սրբապիղծներին, յուրաքանչյուրն ունի իր բնավորությունը, ում իր որոշակի դիրքը թույլ է տալիս մեզ ներկայանալ օբյեկտիվ կերպարանքով»<sup>153</sup>: Նա հպարտ է եղբայրասպանի կոչումով, որը հենց ինքն է իրեն հորջորջել, այդպիսով չշեղվելով իր գործողությունների իրականացումից և բնությունը նենգ սրիկա լինելուց. «Քահանա՛, - ասել է նա Հայնրիխին, - ես ես եմ, ուրիշը լինել չեմ կարող, ինքս մի սրիկա եմ ծնվել, բայց եղբայրասպանի գեղեցիկ կոչմանը արժանացել եմ իմ իսկ արժանիքներով»<sup>154</sup> Գեցը, ըստ երևույթին, պարադոքսալ վերահիստեգրացիայի օրինակ է, քանի որ նա չի փոխում գոյություն ունեցող հարաբերությունների կառուցվածքը, ընդհակառակը ամրապնդում է եղած հավասարակշռությունը: Վերջիվերջո նա որոշակի դեր է խաղում այդ կառուցվածքում, քանի որ սրիկան, դավաճանը և սատանան իրենցից ներկայացնում են բացասականը: Բարդ են նաև Գեցի ընկալումները սիրո մասին: Նրա ուժերից վեր է սիրել, նա միշտ փորձում է զարմացնել իրեն, խորհել ինքն իրեն, տեսնել իրեն ուրիշի աչքով: Նա ցանկանում է վայելել իր պատկերը: Եվ շատ հաճելի է, որ նա խանդում է, ինչպես ասում է Կատրինին. «Ի՞նչ պետք է անեմ, որ սիրված լինեմ»: Եթե սիրում եք ինձ, ապա դուք կզգաք բոլոր հաճույքները: Հեռացի՛ր, քած! Ես չեմ ուզում, որ որևէ մեկն ինձ օգտագործի»<sup>155</sup>:

«Եթե մենք ուրիշների հայեցակարգը մղում ենք եզրագծին, հանդիպում ենք Աստծուն»: «Մատանան և տեր Աստվածը» պիեսում, Գեցի հայացքների առարկան երբեմն համընկնում է բոլոր մարդկանց

<sup>153</sup> Sartre J.P. Le Diable et le Bon Dieu, P. 1951. P. 39:

<sup>154</sup> նույն տեղում, էջ 59:

<sup>155</sup> նույն տեղում, էջ 85:

հետ, երբեմն Ամենակարողի՝ բացարձակ սուբյեկտի հետ, որը երբեք չի կարող վերածվել օբյեկտի: Ամբողջ պիեսի ընթացքում Գեցն ինքն իրեն տալիս է ուրիշներին: Բայց միևնույն ժամանակ, խանդավառվելով իր հպարտությամբ՝ նա ձևացնում է, որ մարտահրավեր է նետում Աստծուն. «Ես չեմ մտածում դևի մասին: - Նա ասում է Հայնրիխին. նա ընդունում է հոգիները, բայց այդ նա չէ, ով անիծում է նրանց: Ես վճռեցի գործ ունենալ միայն Աստծո հետ, հրեշներն ու սրբերը միայն նրա մոտ են գալիս: Աստված տեսնում է ինձ, քահանա՛, նա գիտի, որ ես սպանել եմ իմ եղբորը, և նրա սիրտը արնահոսում է»<sup>156</sup> :

Գեցը պատմում է Հայնրիխին. «Մենք չենք, և մենք ոչինչ չունենք: Բոլոր օրինական երեխաները կարող են վայելել հողը առանց վճարելու: Ոչ՝ դու, ոչ՝ ես: Մանկուց ես աշխարհին եմ նայել բանալու անցքի միջով. այս գեղեցիկ, փոքրիկ, լեփլեցուն ձվին, որտեղ բոլորը զբաղեցնում են իրենց հատկացված տեղը, բայց ես կարող եմ վստահեցնել ձեզ, որ մենք դրա մեջ չենք մտնում: Դրսից: Հրաժարվեք այս աշխարհից, որը չի ցանկանում ձեզ: Չարիք գործելով՝ դուք կտեսնեք, թե ինչպես եք զգում լույսը»<sup>157</sup>: Գեցը վերջիվերջո կատարում է իր էկզիստենցիալ ընտրությունը. «...Ես կմնամ մենակ այս դատարկ երկնքի հետ, որն իմ գլխավերևում է, քանի որ ես այլ միջոց չունեմ բոլորի հետ լինելու համար»<sup>158</sup>:

Գեցն իրեն առանձնացնում է բոլորից: Նա փառասեր է, քանի որ նա ձգտում է ներգործել մյուսների վրա, օգտագործելով իր իմիջը, առանց առաջացնելու որևէ հիացմունք կամ սեր, այլ նողկանք, սարսափ, ատելություն, որոնք անկախ ամեն ինչից ճանաչման ձևեր են: Երբ, օրինակ, Հայնրիխը փորձում է հաղթահարել իր գայթակղությունները և պատրաստվում է դիմակայել դիվային տեսքին, Գեցը հարցնում է նրան. «Դուք երբևէ տեսել եք նրան; և, հետևելով քահանայի դրական պատասխանին, նա կրկին հարցնում է. «Ես նմա՞ն եմ նրան:»<sup>159</sup>: Գեցը հուսով է, որ Հայնրիխը իր մեջ նշմարում է չարիքի դիմագծեր. նա ցանկանում է հայտնվել քահանայի առաջ սատանայականն հռչակավոր սև լույսով, և դա է նրա փառասիրությունը: Մարտրյան հերոսի փառասիրությունը, այսպիսով, մոտենում է եսասիրության, որի մասին խոսում է Ռուսոն: Մենք կարող

---

<sup>156</sup> նույն տեղում, էջ 59:

<sup>157</sup> նույն տեղում, էջ 57:

<sup>158</sup> նույն տեղում, էջ 252:

<sup>159</sup> նույն տեղում, էջ 55:



ենք ասել Գեցի մասին, որ ուրիշների կարծիքով, «նա նկարում է սեփական գոյությունը»: Նա չարիք է գործում, որպեսզի միայնակ դուրս գա բոլորի դեմ: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ քահանան նրան ցույց է տալիս չարիքի բազմակողմանիությունը՝ «Արդարացի դժոխքը», նա ասում է. «Գեցը ձգտում է պաշտպանվել անկախ իր մենությունից և անտարբերությունից: Չարիքը նրանց չի պատկանում. նրանք չարիք են գործում իրենց իսկ ցանկությամբ կամ հետաքրքրվածությամբ. ես չարիք եմ գործում հանուն չարիքի»<sup>160</sup>: Չարիքի մեջ միայնակ լինելն է նրա հպարտությունը: Սակայն Գեցը պատրանքի գոհ է դառնում: Մի կողմից, քանի որ սրբապիղծը երբեք միայնակ չի լինում, և մյուս կողմից, քանի որ առանձնահատկությունը, որով նա քծնում է ինքն իրեն, կարող է միայն գոյատևել որպես հասարակության շրջված արտացոլում. դա իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ցուցադրում է իր հակադիրը. դա կախված է նրանից՝ արդյոք ի՞նչ է փորձում հերքել: Գեցի առանձնահատկությունը ոչ աղեկվատ է, դա նրա «աշխարհիկ» որակներն են, որոնք պահանջում են անվերջ ցուցադրումներ, ինքնագնահատականը ուրիշների աչքերում, դատողություններ և համեմատություններ: Գեցը գտնվում է ինքնագնահատականի ծուղակի մեջ: Աստծո առաջ, այլ մարդկանցից հեռու, Գեցը տեսնում է, որ վերածվում է կենդանու: Լինելով անիծված և դատապարտված այն կոտորածի համար, որը նա է նախապատրաստում, նա շողոքորթում է ինքն իրեն սրբությամբ, որը, նրա կարծիքով, շնորհ է իր անձին: Ինչպես ցույց է տալիս Ֆիլիպ Մաբոտը, Գեցը ակնկալում է Աստծու բացասական ճանաչումը, որը միշտ կմնա թերի, բայց որը նրան պարզապես վեր կդասի իր ընկերներից Աստծո հետ հաղորդակցման ժամանակ: Ըստ այդ նույն սկզբունքի, խոսելով փառասիրությունից, Գեցը առաջին հերթին ցանկանում է գտնել իր սեփական կերպարը Աստծո հայացքում, ապա ազդել հենց Աստծո վրա, ում նա, այնուամենայնիվ, ընդունում է իբրև բացարձակ սուբյեկտ: Գեցը փորձում է զայրացնել Աստծուն, որպեսզի նա տառապի. ակնհայտ է, որ բոլոր այդ ջանքերը անիմաստ են, քանի որ դրանք լի են փառամոլության զգացումով: Գեցը պետք է տեսնի իրեն Աստծո աչքերում, - այստեղ կարևոր դեր է խաղում հայելու փոխաբերությունը և նրա արտացոլանքների բազմապատկումը, քանի որ դրանք փոխկապակցված են սարտոյան հերոսի օտարմանը, ով հանուն կերպարի գրկվել է իր գոյությունից: «Ես ամեն բոպե մտածում էի, որ

---

<sup>160</sup> նույն տեղում, էջ 106:

կարող եմ լինել Աստծո աչքերում»<sup>161</sup>, - ասում է նա Հայնրիխին: Սակայն Գեցը միաժամանակ փորձում է Աստծուն դարձնել օբյեկտ, որպեսզի վերցնի այն և բացի՝ փորձելով հասկանալ էությունը:

Ինքնաճանաչման ճանապարհին ծառանում է մի նոր խնդիր. անցնել Աստծո կամ Սատանայի կողմը: Արժանացած լինելով համաժողովրդական ատելության՝ նա փորձում է վերագտնել ժողովրդի սերը: Սակայն այդ սերը չի կարելի վերականգնել սպառնալիքի և վախի միջոցով: Այս դեպքում էլ չարիքը նրա ներքին հակամարտության հաղթողն է: Չարիքն է, որ ցանկացած գնով ստիպում է թուլանալ և ընկրկել բարի մտադրություններից, որոնք էությամբ այդքան էլ բարի չեն: Գեցին կործանող ուժը հանդիսանում է հենց իր փառամոլությունը: Նրան ոչինչ չի կանգնեցնում փառքի հասնելու ճանապարհին: Կորցնելու ոչինչ չունենալով՝ նա դիմում է ծայրահեղությունների՝ ընդունում է եղբայրասպանի պիտակը, համարձակվում է մարդկային կյանքերի վերջնագիր ներկայացնել առանց որևէ խղճի խայթ զգալու: Խիղճն իսպառ վերացած է նրա հոգում: Նա ցանկանում է կյանքի հիերարխիայի ընթացիկ կարգը խախտել և իրեն վեր դասել մարդանցից, իրեն վերագրել աստվածային ունակություններ, ուժ և կարողություն, ճակատագրեր վճռելու իրավունք: Նա իրեն նույնացնում է Սատանայի հետ՝ փնտրելով արտաքին և ներքին նմանություններ: Նա, ինչպես և Սատանան, ռենեգատ (դավաճան) է: Սակայն Գեցը կորցնում է իր ինքնատիրապետումը, երբ արդեն իրեն գերմարդ է զգում: Մարդ պետք է ունենա որոշակի ինքնասահմանափակում, անհրաժեշտ պահին կանգ առնելու զգացում: Սակայն Գեցի հպարտությունն ու փառատենչությունը բթացրել են նրա զգայունակությունը: Նրա գիտակցությունը մթագնել է: Մտքում կրկնվում է միայն մի միտք, որ նա է սատանան, և գորեղ է բարձրալից: Նա ցանկանում է ոտք մեկնել Աստծուն՝ փորձելով ցույց տալ իր ողջ կարողությունը: Բիարկել, նա փոխվելու փորձեր կատարում է, սակայն չարիքը արմատացած է նրա մեջ, և նրան թույլ չի տալիս շեղվել «ճիշտ» ուղուց: Նա խրված է այդ չարիքի ճահճում, և ոչինչ այլևս չի կարող նրան դուրս հանել: Սրիկա և դավաճան լինելու փաստը հաճելի է Գեցին, նաև հաճելի է լինել բոլորի ատելության և թշնամանքի առարկան: Չարագործի ներքին մոլուցքը բավականություն է պատճառում իրեն. կենդանական բավականություն:

---

<sup>161</sup>Նույն տեղում, էջ 237:

Դիտարկելով ներքին հակամարտությունների շղթան հասկանալի է դառնում, որ Գեցը միշտ մղել է և շարունակելու է մղել պայքար իր իսկ անձի դեմ: Բարիք և չարիք, օտարում և մեկուսացում, հպարտություն և փառամոլություն, ահա սրանք են այն հատկանիշները, որոնցով օժտված է նա: Այո՛, բարիք, քանզի փոխակերպվելու փորձեր եղել են, թեկուզ և անհաջող: Բայց, ավաղ, չարիքն ավելի ուժեղ գտնվեց Գեցի ճակատագրի ձևավորման հարցում, որտեղ նաև մեծ դեր ունեւ հենց հերոսի կամքը՝ համակերպվելու և փոփոխություններ չձեռնարկելու կամքը: Գեցը կատարում է իր էկզիստենցիալ ընտրությունը. նա ընտրում է չարը, նա գերադասում է Մատանային:

*Амалия Согомонян*

**КОНЦЕПЦИИ ГРЕХА И СВОБОДЫ В ПЬЕСЕ ЖАН-ПОЛЬ  
САРТРА «ДЬЯВОЛ И ГОСПОДЬ БОГ»**

В пьесе Жан-Поль Сартра «Дьявол и господь бог» - обсуждаются концепции греха и свободы. Эта статья попытка понять экзистенциальный выбор главного героя Гейтца в контексте греха и свободы. В конце пьесы главный герой выбирает зло. Он выбирает Дьявола.

*Amalya Soghomonyan*

**THE CONCEPTS OF SIN AND FREEDOM IN THE PLAY *THE DEVIL  
AND THE GOOD LORD* BY JEAN-PAUL SARTRE**

The article touches upon the concepts of sin and freedom in the play *The Devil and the Good Lord* by Jean-Paul Satre. The article is an attempt to understand the main heroe's existential choice in the context of sin and freedom. Warlord Goetz chooses to be the Evil. He chooses the Devil.

**ԿՆՈՋ ԿԱՐԾՐԱՏԻՊՍՅՒՆ ԴԵՐԵՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ**

*Հիմնաբառեր՝ կանանց գրականություն, կարծրատիպային դերեր, արժեհամակարգ*

Ամենավաղնջական ժամանակների տեքստերից մինչև դասական գրականություն՝ թե՛ տղամարդ, թե՛ կին գրողները, կառչած են մնացել կանացի շատ կերպարային մոդելներից՝ որպես իրենց ուղեցույց: Տղամարդ կերպարներին տրվել է ազատ գործելու իրավունք՝ լինելու և դառնալու այն, ինչ իրենք են ուզում, հաղթելու և նույնիսկ ձախողվելու, եթե իրենք այդ են նախընտրում: Տղամարդն է կյանքի բոլոր փորձությունների, գործողությունների մասնակիցը, քաղցր ու դառը պահերի համտեսողը: Իսկ եթե կին կերպարը շեղվում էր ընդունված նորմից և իրեն վերագրված դերից, խստաշունչ կաղապարներից և կարծրատիպերից, ապա անմիջապես ուշադրություն էր հրավիրվում մաքրամաքրության կարևորության վրա, որի կրողները հարկ է, որ լինեին կանացի կերպարները: Կանացի կարծրատիպերը գրականության մեջ երկար ժամանակ նույնքան անփոփոխ էին, որքան նրանց վերագրված սահմանափակումներն իրական կյանքում<sup>162</sup>:

17-րդ և 18-րդ դարերի ողջ ընթացքում Կինը, որպես գրական կերպար՝ առավելապես սիրո օբյեկտ էր՝ հիմնականում կրքի առարկա, կիրք, որը սովորաբար ունենում էր կամ դավաճանությամբ, կամ ողբերգությամբ պսակված ավարտ:

Ջոհաբերությունները և անձնվիրությունը կնոջ կերպարի անբաժանելի մասն էին, որի արդյունքում կինն ընկալվում էր հիմնականում որպես կախյալ, երկչոտ, հնազանդ էակ, որը ներողամիտ էր տղամարդու թերությունների հանդեպ և ապրում էր միայն տղամարդուն հաճոյանալու համար: Բացակայում էր կնոջ կողմից իր ինքնության և «եսի» կարևորության ընկալումը, որը հաստատումն է Ֆրոյդի ներկայացրած կարծրատիպի, այն է՝ «կանայք էականեր են, որոնք ունեն թերգարգացած էգո»<sup>163</sup>:

<sup>162</sup> Female Stereotypes in Literature (With a Focus on Latin American Writers) by D. Jill Savitt. //http://teachers.yale.edu/curriculum/viewer/new\_haven\_82.05.06u/print

<sup>163</sup> Freud S. Some Psychical Consequences of the Anatomical Distinction between the Sexes. In Sigmund Freud, 1925. On Sexuality. 1991.pp. 323-344.

Մերի Էնն Ֆերգյուսոնը իր «Կանանց կերպարները գեղարվեստական գրականության մեջ»<sup>164</sup> աշխատության մեջ ներկայացնում է կանանց կերպարների կարծրատիպերը, որ 17-18-րդ դարերում ներկայացվել են գեղարվեստական երկերում: Կանացի կարծրատիպերը ներառում են՝ *մայր, կին, սիրուհի/գայթակղիչ կին, սիրո առարկա, պատաված օրհորդ* տեսակները:

«Մայր-կինը» հիմնականում ներկայանում է որպես բարու մարմնացում, որպես կյանք նվիրող, որպես դաստիարակ: Երբ մայրը հրեշտակային է, ըստ Ֆերգյուսոնի, նա հեզ և հնազանդ է, իսկ երբ բարկացած է կամ դիվային՝ դառնում է կամակոր, փնթթնփան և նույնիսկ վիուկ<sup>165</sup>: Կանայք և մայրերը ոչ միայն ձանձրալի են, այլ նաև տհաճ: Նրանք հետապնդում են իրենց երեխաներին, փնթփնթում ամուսնու վրա, բղավում, խենթանում, ինչպես նաև մյուսներին խանգարում զվարճանալ<sup>166</sup>:

«Ամուսնու կին» լինելու հիմնական գաղափարը ներկայանում է կնոջ ենթարկվելու, ստորադասության և ամուսնուն գոհացնելու ցանկության համատեքստում: Կրավորական կեցվածքով կնոջ մյուս կողմում այն կինն է, որն իշխում է ամուսնուն և նսեմացնում նրան: Նա ամուսնու արարքների, թե՛ հաջողությունների և թե՛ ձախողումների բանալին է: Այն պահին, երբ կինը փորձում է ազատագրվել իր ենթակա դերից՝ դառնում է բռնակալական կերպար՝ գարշելի և չար:

Իր վատագույն դրսևորումներում անգամ «ամուսնու կին» տեսակը մի գլուխ բարձր է «պատաված օրհորդի» կերպարից, քանի որ ամուսնանալով՝ նա որոշակի դերակատարություն է ստանում և պատասխանատվություն ձեռք բերում: Պառաված օրհորդը գրականության մեջ բացասական առնշանակության կրող է: Նա առավելագույնս մերժված է, արտաքնապես անհրապույր (չէ որ կինը հիմնականում արժևորվում է իր գեղեցկությամբ), և մյուսների կողմից ընկալվում է կամ որպես խենթ, կամ որպես խղճմտանքի արժանի կերպար: Նա առավել հաճախ մայրության և կանացիության

---

<sup>164</sup> Ferguson M. Images of Women in Literature, Boston: 1973.

<sup>165</sup> Ibid, pp. 5-11.

<sup>166</sup> Women on Words and Images (group), Dick and Jane as Victims: Sex Stereotyping in Children's Readers, Princetom, N.J.: 1972. -P. 6; Pearson C. and Pope K., Who am I This Time? (Female Portraits in British and American Literature). N.Y.: McGraw Hill, 1976; The Woman and the Hour: Harriet Martineau and Victorian Ideologies. Toronto, University of Toronto Press, 2002.

հիասթափված և խորտակված անուրջների ներկայացնողն է և հիմնականում անսեռ է<sup>167</sup>:

«Կույսը», որն անվանվում էր նաև «հրեշտակ», միշտ պարկեշտ է, անբիծ, շիտակ, անմեղ և անտեղյակ երկրային հարցերից: Նրան երկրպագում են: Թեպետ նրանք զուրկ են հեշտասեռ զգայականությունից՝ տղամարդիկ պաշտում են նրանց: «Կույսին» խորհրդանշային կերպով պատկերում են նաև լույսի, սպիտակի, պարզության, եթերային լուսարձակության ծիրում: Երբ «Կույս» տեսակը թերանում է իր անմեղության մեջ՝ նա վերածվում է կնոջ մյուս՝ «գայթակղիչ կին» կամ «անբարո կին» տեսակին: Անբարո կինն անպայման չէ, որ լինի «գայթակղիչ կին» տեսակը: Նա կարող է «անբարո» դարձած լինել՝ որևէ տղամարդու պատճառով: Իսկ երբ կույսի դերը փոխվում է մոր դերին՝ նա դառնում է կյանք շնորհող: «Մայր-կինը» կարող է համեմատության եզրեր ունենալ Կույսի կերպարի հետ, սակայն առավել աշխարհիկ է, միս ու արյունից ստեղծված<sup>168</sup>: «Գայթակղիչ կին» տեսակը, իհարկե, «Կույս» տեսակի լրիվ հակապատկերն է: Նա կյանքից վերցնում է լավագույնը և օգտագործելով իր գեղեցկությունն ու գրավչությունը՝ զվարճանում տղամարդու թուլությունների վրա: Նա հաստատակամ է՝ ջարդելու բոլոր սեռական կարծրատիպերը: Սակայն թե՛ կյանքում, թե՛ գրականության մեջ այս տեսակի կանացի կերպարները ենթակա են մեկուսացման, մերժման և օտարացված են հասարակությունից: «Գայթակղիչ կինը» գրավիչ է, զգայական հաճույք ճառագող, տղամարդիկ պաշտում են նրան, կանայք՝ նախանձում, նրանք կարող են տղամարդուն կործանել կամ մղել հզոր արարքների<sup>169</sup>: Ֆերզյուստը կանանց տեսակների այս շարքը հավելում է նաև գրական երկերում առկա կանացի այլ՝ *կրթյալ կին, ազնվագարմ տիկին, հնազանդ կին, իշխող կին և նույնիսկ նոր՝ ազատագրված կին*, կերպարներով:

18-րդ և 19-րդ դարերի անգլիական գրականության մեջ կանանց վերապահված դերերը կարելի է դիտարկել որպես փոքր և անբնականորեն սահմանափ վանդակներ, և շատ քիչ կանայք էին խիզախում թները չափազանց լայն տարածել և դիմադրել այդ սահմանափակումներին: Օրինակ, **Ֆրենսիս Բրոնիի Էվելինան**, որը

<sup>167</sup> Ellmann M. Thinking about Women. N.Y., 1968. pp. 55-100.

<sup>168</sup> Hardwick E. Seduction and Betrayal. N.Y.: Random House, 1970. - p.182.

<sup>169</sup> Pearson C. and Pope K. Who am I This Time? (Female Portraits in British and American Literature). N.Y.: McGraw Hill, 1976. - pp. 54-58.

կարևորում էր կնոջ համեստությունը, միամտությունը, տղամարդկանց վիրավորանքներին անխոս ենթարկվելը և, նույնիսկ, անպատասխան սիրո հմայքը, **Ջեյն Օսթինի**՝ բազմաթիվ «հիմարիկ» կանացի կերպարները, ռացիոնալ և զգացմունքային **Ջեյնը, Էլիզաբեթը, Մարիանան և Էլիսբերը, Շ. Բրոնտեի Ջեյն Էյրը**, որը անկախ, խելացի, ազատասեր, սակայն ոչ ազատամիտ կին էր, **Էմիլի Բրոնտեի** «այս աշխարհի համար չափազանց լուսավոր» **Քեթին, Ջորջ Էլիոթի** խորաթափանց ու շրջապատից առանձնացող կանայք և այլ հերոսուհիներ դառնում են այն կերպարները, որոնք ներկայացնում են հին և նոր արժեհամակարգերի միաձուլումը, արժեքային նոր հաստատուններ որդեգրելու ուղին և դրա համար պայքարը:

Ինչևէ, մի քանի դարերի նահատակությունից հետո՝ կանայք որոշեցին ազատագրվել կնատյացության կեղեքումներից՝ մարտահարավեր նետելով սեռերի անհավասար պատկերումներին: 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկիզբին ստեղծագործող կին արվեստագետները պայքարում էին կանանց կյանքը իրապես ներկայացնելու, կանանց տարբեր դերերի, փորձությունների, խոհերի ամբողջ համայնապատկերը ցույց տալու, հասարակությունում որպես անկախ անդամներ ներկայանալու համար և ոչ թե այն դերերի պրիզմայով, որ նրանք ունեին՝ դուստր, կին, մայր, սիրուհի և այլն: Նրանք ցանկանում էին ընկալվել որպես այս երկուսի միջև միջնորդներ՝ որոնք ունակ են արարելու և ստեղծելու: Եթե տղամարդիկ կյանք են տալիս են արվեստի գործերին, ապա կանայք կյանք են տալիս նոր կյանքի, որն արվեստներից ամենավեհն է<sup>170</sup>:

19-րդ դարի վերջն ու 20-րդ դարի սկիզբն այն ժամանակաշրջանն էր, երբ պատմական և գրական հոլովություններում սկսեց շրջանառվել «Նոր կին» (New Woman) արտահայտությունը: Միևնույն ժամանակ, շատ ստեղծագործություններում սկսում է հայտնվել «նոր կնոջ» կերպարը, որի մասին ամերիկացի պատմաբան Ս. Էվանսը գրել է՝ «Այդ ժամանակահատվածում առաջացել է կնոջ սոցիալական երկու տեսակ՝ միջին դասի «նոր կինը» և «աշխատավոր աղջիկը», <...>, որոնք մեծ քայլ կատարեցին տնային օջախի վիկտորիանական մշակույթից դեպի ինքնուրույնություն, անկախություն և զվարճանքներ: Կանանց շրջանում այս փոփոխությունների ամենազարմանալի վկայությունը՝

---

<sup>170</sup> Pearson C. and Pope K. Who am I This Time? (Female Portraits in British and American Literature). N.Y.: McGraw Hill, 1976.-pp. 1056-159.

կրթյալ, ինքնուրույն, հաճախ չամուսնացած «նոր կնոջ» հայտնվելն էր»<sup>171</sup>:

20-րդ դարում կին գրողները ընդլայնեցին իրենց թեմաները՝ դրանք դուրս էին գալիս ընտանեկան բանտերում կողպված կանանց կյանքն ու տառապանքները նկարագրելու շրջանակներից: Նրանք իրենց վեպերում բացահայտեցին նոր աշխարհ՝ կնոջ աշխարհը՝ նկարագրված կնոջ աչքերով: Իրենց երկերում այս գրողները հասարակությանն առաջարկում էին ոչ միայն նոր թեմաներ, այլ նաև վարքի նոր նմուշներ և մոդելներ, պաշտպանում էին կնոջ ինքնուրույն ընտրության և ինքնուրույն ճակատագրի իրավունքը: Կին գրողների հայտնվելը, որոնք գրում էին վեպեր, որոնց կենտրոնում այն կինն էր, որն ինքնուրույն «սարքում» էր իր կյանքը, և դա արտահայտվեց շատ գրողների ստեղծագործություններում, որոնք ստեղծեցին կանանց նմանատիպ կերպարներ: Հետզհետե ծնվում են կանացի կերպարներ, որոնք «մերժում են կանացի կեցության բոլոր ավանդական մոդելները և փորձում իրենց կյանքին տալ առավել որոշակիություն, փոխել դրա ընթացքը, գործողությունների շրջանակը: Եվ դա ներկայացվում է ոչ թե որպես պարտադրյալ անձնագոհություն, այլ որպես գիտակցված քայլ»<sup>172</sup>:

20-րդ դարավերջի և 21-րդ դարակզբի աշխարհայացքային, քաղաքական, իրավական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում փոփոխությունների համատեքստում ծնվում է նոր տիպի կերպար, որի մեջ հանդիպում են և սկսում միմյանց հետ փոխառնչվել արժեքային տարբեր կողմնորոշիչներ, որոնք երբեմն հակասում են այլ մարդկանց կենսակերպին և շրջապատող աշխարհի արժեհամակարգին: Կնոջ կերպարը երբեմն տեղծվում է ոչ թե արդեն պատրաստի արժեհամակարգի զոնայում՝ ըստ բարու, խելամտության, արժանավորի բնական ընկալումներին համապատասխան, այլ հանդես է գալիս որպես բարոյապես ինքնուրույն տարր՝ արժեքանորեն հակադրվելով ընդհանուր օրինաչափություններին:

Ժամանակակից անգլիացի կին գրողների երկերում կին կերպարները ներկայանում են ամենատարբեր մոդուսներում՝ սիրող

---

<sup>171</sup> Стен` Костина Е. «Женская тема» в американском романе 1870-1910-х годов: автореферат дисс... к. филол. н.: - Саранск: 2003.

<sup>172</sup> Браерская А. Женская идентичность в контексте развития концепций «другого» в европейской культуре XX-XXI века: автореферат дисс. ... к. филос.. н. Ростов-на-Дону, 2011.



կին, զոհ-կին, անտարբեր կին, անբարո կին, բռնակալ և խանդոտ կին, առեղծվածային և խորհրդավոր կին:

Օրինակ, 20-րդ դարավերջի անգլիացի հայտնի գրող **Անջելա Բարթերի** ստեղծագործությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլի՝ ըստ գլխավոր հերոսուհիների տեսակի: Վաղ փուլը 60-ականներն են, երբ նրա հերոսուհիները ներկայանում են որպես զոհեր: 1970-ականները կարելի համարել անցումային շրջան գրողի ստեղծագործության մեջ, երբ նրա հերոսուհիները սկսում են իրենց ինքնության և կանացիության փնտրտուքները: Իսկ 80-ականների սկզբից նրա հերոսուհիները ձեռք են բերում առաջնորդի և դիկտատորի հատկանիշներ: Գրողի ստեղծագործություններում հերոսուհիների զգացմունքների երանգապնակը տատանվում է սեփական անգուսպ ու խենթ կրքերի «խորխորատները» ներկայացնելուց՝ մինչև եսակենտրոն և եսասիրական ձգտումներն ու սեփական անձի վրա կենտրոնանալը: Նրա հերոսուհիները հազվադեպ են խորհում իրենց վարքի դրդապատճառների կամ մղումների մասին: Օրինակ, «Մեր» վեպում ներկայացված ժամանակակից աշխարհի այլասերված բնույթը գրողն առավելապես բացահայտում է գլխավոր հերոսուհու՝ Աննաբելի կերպարի միջոցով: Ստեղծագործության պատումի ընթացքում՝ գորշ, փոքր-ինչ տարօրինակ մկնիկից Աննաբելի կերպարը վերափոխվում է հինդուիստական պանթեոնից մահվան սարսափելի աստվածուհի Կալիի, որը լափում է իրեն հետևողներին, իսկ դրանից հետո դառնում տղամարդկային եսասիրության դժբախտ զոհը:

Մեկ այլ անգլիացի հայտնի գրող **Անտոնիա Մյուգան Բայթթի** «Հրեշտակներ և միջատներ» (*Angels and Insects*, 1992) երկերգության առաջին՝ «Մորֆո Յուջինիա» վիպակի գլխավոր հերոսուհին՝ Յուջինիան դաստիարակվել էր ըստ վիկտորիանական հասարակությունում ընդունված վարքուկանոնի, որտեղ երեսպաշտությունը մարդկանց շփման հիմնական ձևն էր: Դա հայրիշխանական հասարակություն էր, որտեղ խաթարվում էր կանացի սկիզբը, որտեղ կնոջն արգելված էր ազատորեն արտահայտել իր ցանկություններն ու զգացմունքները: Եվ ամուսինն էլ երկար ժամանակ հիանում էր կնոջ հենց այս հատկանիշներով, քանի որ իրեն շատ հարմար էր, երբ կինը անխախտորեն հետևում էր «պատշաճության» ընդունված կանոններին: Սակայն այս ամենը չի խանգարում, որպեսզի Յուջինիան, ամուսնուն դավաճանի սեփական եղբոր՝ Էդգարի հետ, որի կերպարը նկարագրված է որպես անխելք, ամբարտավան, սակայն ֆիզիկապես զարգացած և առնական տղամարդ: Հենց կին կերպարին

հատուկ կեղծ բարեպաշտությունը և անմեղության «սուրոգատը» հանգեցնում են մարդկային փոխհարաբերությունների խաթարման:

Այսպիսով, կին հեղինակների վեպերին հատուկ է պատմականորեն որոշակի պայմանավորվածություն ունեցող տիպաբանություն, կնոջ կերպարի կենտրոնական դերն ընդգծող հատկություն: Տարիներ շարունակ գրական խոսույթում կնոջ կերպարը կամ սրբացվում էր, կամ ներկայացվում որպես բացասական հատկանիշների մարմնացում: Ժամանակակից կին հեղինակների ստեղծած կանացի կերպարներն ավելի հասուն են, «նյութական», «մարմնական» և երբեմն ստեղծվում են ոչ թե արդեն պատրաստի արժեհամակարգի զոնայում՝ ըստ բարու, խելամտության, արժանավորի բնական ընկալումներին համապատասխան, այլ հանդես են գալիս որպես բարոյապես ինքնուրույն տարր՝ երբեմն նաև արժեբանորեն հակադրվելով ընդհանուր օրինաչափություններին:

Gayane Yeghiazaryan

## THE STEREOTYPES OF FEMALE ROLES IN BRITISH LITERARY TRADITION

**Key words: female literature, stereotype models, value system**

In the article a brief overview of the female roles in literature from the ancient times to the beginning of the 21th century is given. Over the years, women characters were depicted as either virtuous or immoral, whereas the female characters created by contemporary women are more mature and "materialistic". They are aware of moral norms, but sometimes many of them deliberately reject moral dictates.

*Гаяне Егиазарян*

## СТЕРЕОТИПЫ ЖЕНСКИХ ОБРАЗОВ В АНГЛИЙСКОЙ ЛИТЕРАТУРНОЙ ТРАДИЦИИ

Ключевые слова: женская литература, стереотипные женские образы, ценностная система

В статье обсуждается проблема стереотипности женских образов и предпосылки создания образа «новой женщины». Дается исторический обзор произведений авторов-женщин от античности до начала XXI века. На протяжении многих лет женские персонажи изображались либо как добродетели, либо аморальные. А женские персонажи, созданные современными женщинами - более зрелые и «материалистические». Они осознают моральные нормы, но иногда многие из них сознательно отвергают моральные требования.

## СТРУКТУРА И ОСОБЕННОСТИ ХРОНОТОПА В РОМАНЕ ДЖУЛИАНА БАРНСА «ШУМ ВРЕМЕНИ»

*Ключевые слова:* Барнс, Шостакович, время, пространство, страх, предательство, музыка.

Роман Д. Барнса «Шум времени» вышел в свет в годовщину 110-летия Д.Д. Шостаковича в 2016 году. В том же году был переведен на русский язык Еленой Петровой и выпущен издательством «Иностранка». Обращение к биографии русского советского композитора не случайно, учитывая то внимание к России, которое не ослабевает в Великобритании последние годы. К тому же, Барнс знает и любит русскую литературу, он немного изучал русский язык, владеет идиомами и топонимами, хорошо знаком с творчеством Б.Пастернака, О.Мандельштама, Е.Евтушенко. Дж.Барнс пишет: *«дух книги лучше всего выразить посредством стиля, путем использования определенных оборотов речи, немного странных оборотов, которые могут подчас напоминать переводной текст. Именно это, по-моему, дает читателю чувство места и времени»*<sup>173</sup>.

При написании своего романа Дж. Барнс во многом опирался на книгу «Свидетельство» Соломона Волкова, которую многие критики считают не совсем достоверным источником. По словам Волкова, Д. Шостакович то ли надиктовал ему свои воспоминания, то ли высказал в частных беседах, но машинописный текст, подписанный композитором, не сохранился или продан неизвестному коллекционеру. Тем не менее, в США и Великобритании эта книга все еще пользуется некоторой популярностью.

Эпиграфом к роману Джулиан Барнс выбрал поговорку: кому слушать, кому на ус мотать, а кому горькую пить. Эпиграф поясняет небольшая сцена на перроне во время войны, которой роман начинается и заканчивается. Таким образом, Барнс делает композицию кольцевой, цельной. А тема Второй мировой войны,

---

<sup>173</sup> Барнс Дж. Предисловие. // Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 8.

закрывающая в себе события всего романа, предстает и как величайшее несчастье, пережитое советским народом на протяжении своей недолгой истории, и как воплощение идеи жизни как борьбы, которой главный герой пытается безрезультатно избежать. Остановившийся на грязном перроне пыльный поезд становится символом государства, который везет свой народ в безрадостное, по мнению писателя, будущее. Цикличность композиции достигается также повторением, с небольшими вариациями, начальной фразы в каждой главе: «Он твердо знал одно: сейчас настали худшие времена»<sup>174</sup>.

Во временном отношении главы разделены двенадцатилетними отрезками: 1936, 1948, 1960, - каждый из описанных годов является високосным. «Как и многие другие, он считал, что високосный год приносит несчастье»<sup>175</sup>. Кирилл Кобрин<sup>176</sup> справедливо отмечает, что в этой трехчастной структуре отражаются три культурно-исторических уровня, присутствующие в романе. Первый уровень – уровень названия, которое является аллюзией на творчество и биографию О.Мандельштама, автора стихотворения «Шум времени», погибшего в 1937. Второй уровень – это образ самого Шостаковича, балансирующего на грани ареста и гибели (физической или духовной), и музыку которого партийные функционеры называли сумбуром, то есть шумом. И, наконец, третий – это неумолкаемый шум XX века.

Роман состоит из трех глав. Трехчастная структура подчеркивается на нескольких уровнях. Это и три отдельно взятых года из жизни Шостаковича, история трех предательств, трех разговоров с властью, и тоническое трезвучие, возникшее от удара трех стаканов с водкой, которое заглушает страх и боль войны, и «шепот музыки», перекрывающий невыносимый шум нелегкого XX века. Барнс в романе «Шум времени» избегает, конечно, совсем уж банальных стереотипов о России, таких, как танцующие под балалайку медведи, но алкоголизм как национальный способ борьбы со стрессом присутствует почти на всех социальных уровнях.

---

<sup>174</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 19, 85, 151.

<sup>175</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 34.

<sup>176</sup> Кобрин К. Предисловие. // Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 7.

Названия глав четко указывают на пространство, в котором происходят события: «На лестничной площадке», «В самолете», «В автомобиле». Они отражают рост благосостояния героя, но не его душевного спокойствия. Сам герой в это время не двигается, он или стоит, переминаясь с ноги на ногу, или сидит. Фактически, все события романа происходят в сознании Дмитрия Дмитриевича Шостаковича. Следует отметить, что все эти локусы характеризуются замкнутостью, определенным достаточно тяжелым запахом, неудобством для спокойного расположения в нем (особенно в первой главе), потенциальной опасностью для находящегося в нем человека. К тому же герой романа находится там в относительном одиночестве, что дает ему возможность обдумать свое положение и подвести предварительные жизненные итоги.

Важным локусом в структуре романа является также пространство дачи семьи Шостаковичей в Ириновке. Дом в детстве наводил на героя ужас, но он постоянно возвращается туда в своих воспоминаниях: *«Помещения огромные, а окна маленькие. На комнату, допустим, в пятьдесят квадратных метров могло приходиться одно-единственное оконце, да и то крошечное. Взрослые считали, что строители дали маху – перепутали метры с сантиметрами»*<sup>177</sup>. Он постоянно хотел оттуда сбежать в домик Юргенсена. Впоследствии дача с несуразными окнами становится аллегорией масштабного таланта Д. Шостаковича и невозможности свободно делиться плодами своего дарования. А отношения с садовником, человеком простым и добродушным, в отличие от гиперпекающей матери, в зрелом возрасте ассоциируются с отношениями с Тухачевским, давшим ему недолгое чувство защищенности в послереволюционном Петрограде, а потом со Сталиным, не понимавшим музыку композитора, но сохранившим ему жизнь.

Противоположным даче в Ириновке локусом в романе являются Крым и Кавказ. Они ассоциируются с любовью, свободой, раскрепощенностью, интуитивным познанием себя самого и новых горизонтов в музыке. Не случайно время, проведенное в этих местах, всегда ограничено: чаще всего отпуск или недолгие гастроли. Под южным солнцем, вдали от ревнивых материнских

---

<sup>177</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 28

глаз, можно позволить себе многое: *«Отдых в Анапе превратился в идиллию. Но любая идиллия по определению распознается только задним числом»*<sup>178</sup>. Безудержное счастье вместе с тем приносит с собой также понимание своей скоротечности. Дж. Барнс достаточно подробно рассказывает о сложных взаимоотношениях Дмитрия Дмитриевича с женщинами, о его понимании любви и верности.

Сквозной темой романа является тема страха, испытываемого героем. В первой главе – это страх перед арестом и возможной собственной беспомощностью на допросе. Страх, что маленькая дочь Галя окажется в интернате для детей врагов народа, где ее превратят в *«жизнерадостный подсолнух, образцового советского человека»*. Во второй главе – боязнь перелета и страх опростоволоситься перед публикой, стыд за произносимые суконные слова, написанные поднаторевшими в этом деле партийными функционерами. В третьей главе – страх заостенеть в славе, потерять способность чувствовать и писать музыку.

Каждая глава является, по сути, историей предательства, малого или большого. В первой главе герой по привычке обращается за помощью к генералу Тухачевскому и впервые сталкивается с проявлениями страха у человека, которого он считал бесстрашным героем. Тухачевский не заступает за опального композитора, чем приводит его в состояние паники, но сам становится жертвой системы. По счастливому стечению обстоятельств, следователь тоже подвергается репрессиям, и о Дмитрии Дмитриевиче забывают.

Во второй главе Дмитрий Шостакович, как самый значительный деятель культуры в советской делегации на международном форуме, оказывается на перекрестном допросе у журналистов во время пресс-конференции. Его внутреннее состояние может быть охарактеризовано как истерическое, он почти не замечает окружающей роскошной обстановки, но четко фиксирует выражение лиц окружающих людей. Шостакович вынужден демонстрировать лояльность к Советской власти и выразить свое негодование по поводу Стравинского, творчество которого на самом деле ему импонирует.

В третьей главе действие происходит уже в правление Н.С. Хрущева. Композитора вынуждают выступить в Коммунистическую

---

<sup>178</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 49

партию, членства в которой он благополучно избегал при Сталине. Шостакович уже не боится за свою жизнь, но теперь он чувствует ответственность за благосостояние семьи. Барнс последовательно демонстрирует читателю, к чему приводит многолетняя жизнь в страхе. Преданный Тухачевским, Шостакович осуждает Стравинского, а потом предаёт собственные принципы, став членом КПСС.

Тем не менее, писатель далек от мысли об осуждении своего героя. Дж. Барнс подчеркивает, что требующие смелости от граждан СССР жители демократических стран на самом деле плохо себе представляют реальное положение дел: *«Эти не понимали того простого факта, что в Советском Союзе невозможно сказать правду и остаться в живых. <...> Иными словами, они хотели крови. Хотели мучеников, чтобы доказать порочность режима. Только вот мучеником предлагалось стать тебе, а не им самим»*<sup>179</sup>. Поэтому роман заканчивается продолжением начальной сцены на перроне (единственной в произведении, которая представлена глазами автора, а не героя), где в звоне грязноватых стаканов рождается тоническое трезвучие, которое *«заглушит собой шум времени, обещая пережить всех и вся»*<sup>180</sup>.

Таким образом, структурные, временные и пространственные характеристики романа четко соотносятся с числом три. Произведение разбито на три главы. В нем описаны три года, разделенные равными отрезками, три основных локуса и три дополнительных.

*Կարինե Գուլանյան*

**ՋՈՒԼԻԱՆ ԲԱՐՆՍԻ «ԺԱՄԱՆԱԿԻ ԱՂՍՈՒԿԸ» ՎԵՊԻ**

**ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ՔՐՈՆՈՏՈՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հիննաբառեր՝ Բարնս, Շոստակովիչ, Ժամանակ, տարածություն, վախ, դավաճանություն, երաժշտություն:*

Հոդվածում քննվում են Ջուլիան Բարնսի «Ժամանակի աղմուկը» վեպի կառուցվածքային, ժամանակային և տարածական հատկանիշները: Հետազոտողը եզրակացնում է, որ դրանք հստակ համապատասխանում են երեք թվին: Վեպը բաժանված է երեք գլուխների: Այն նկարագրում է երեք տարի,

<sup>179</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 143-144.

<sup>180</sup> Барнс Дж. Шум времени. М. Иностранка. 2017. С. 229

որոնք տարանջատվում են հավասար հատվածներով, ունի երեք հիմնական և երեք լրացուցիչ տարածություն:

*Karine Gulanyan*

**THE STRUCTURE AND CHRONOTOPE FEATURES IN *THE NOISE OF TIME* BY JULIAN BARNES**

**Keywords:** *Barnes, Shostakovich, time, space, fear, betrayal, music.*

The article studies the structural, temporal and spatial characteristics of the novel *The Noise of Time* by Julian Barnes. The researcher concludes that they clearly correspond with the number three. The novel is divided into three chapters which describe the three years separated by equal segments: it has three main and three additional locations.



**ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈՒԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ Փ.ԱՔՐՈՅԻ  
«ՀՈՔՄՍՈՒՐ» ՎԵՊՈՒՄ**

*Հիմնաբառեր:* Փիթեր Աքրոյդ, Հոքսմուր, սև մոգություն, օկուլտիզմ, ժամանակ և տարածություն, Լուսավորություն, ռացիոնալիզմ, միստիցիզմ, Լոնդրն:

Ժամանակակից պոստմոդեռնիստական գրականության ժանրային բազմազանության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում միստիկական թրիլերը, որի լավագույն օրինակներից է անգլիացի վիպասան Փիթեր Աքրոյդի «Հոքսմուր» վեպը (1984) : Այն իր մեջ զետեղում է բազմաթիվ երկակիություններ, երկիմաստություններ ու հակադրումներ, որոնք ի հայտ են գալիս թե՛ արտաքին՝ կառուցվածքի ու պատումի մակարդակում, թե՛ բովանդակային-թեմատիկ տարրերում և դրանց խորը, բազմանշանակ, որոշակիորեն խճճված փոխհարաբերության մեջ: Քննելով վեպի այս զարմանալի «հյուսքերը»՝ կփորձենք պարզել հատկապես ժամանակի խնդրի դրսևորումներն ու դրա յուրօրինակ հեղինակային լուծումները:

«Գոթական սարսափի», «մակաբրի» բազմաթիվ տարրերով հագեցած այս վեպի իրադարձությունները ծավալվում են երկու տարբեր ժամանակաշրջանների՝ 18-րդ դարակազմի և 20-րդ դարավերջի Լոնդոնում: Հաջորդաբար գլուխներում հերթագայվում են երկու դարաշրջանները, փաստորեն գլուխների մեկը մյուսից անցման պահին տեղի է ունենում ժամանակային ցատկ, և արդյունքում փոխվում են իրակությունները, կերպարներն ու դեպքերը: Հետևաբար ստեղծվում են տարբեր երկու սյուժետային զծեր, որոնց մեջ հենց սկզբից առկա են որոշակիորեն իմպլիցիտ ընդհանրություններ, որոնք սյուժեի զարգացմանն առնթր սկսում են պարզորոշվել: Արդյունքում երկու պատումները խաչաձևվում են, միաձուլվում: Հենց սկզբից իրար հաջորդող երկու գլուխների կամրջումը կատարվում է պայմանականորեն, իրավիճակի զուգադրման միջոցով, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում. «*Ես գտնվում եմ Փիթում, սակայն այնքան խորն եմ գնացել, որ կարող եմ ցերեկով տեսնել աստղերի լուսավորությունը*»:<sup>181</sup> Հաջորդ գլխում մեր օրերում կատարվող իրադարձությունները սկսվում են նույն տեղում, նույն կետից, որտեղ ավարտվում է 18-րդ դարի պատումը, նույն «ցերեկով» («*Ցերեկը նրանք*

<sup>181</sup> Ackroyd P. *Hawksmoor*. London. Abacus. 1986. p. 25

*մոտենում էին Սփիթլֆիլդզի եկեղեցուն*»<sup>182</sup>): Փաստորեն տարածության անփոփոխ մնալու շնորհիվ երկու ժամանակները, հետևաբար և պատումների միջև կապն ամբողջությամբ չի կորում, այսինքն՝ ստեղծվում է գրաքննադատ Է.Գրինի արտահայտությամբ, «ժամանակի տարածականություն»:<sup>183</sup> Այդպիսով, տարածությունն օղակում է երկու տարբեր սյուժետային գծերը, իսկ վեպի կառուցվածքում գործում է տրոհման ու միակցման սկզբունքը: Միևնույն սկզբունքն է գործում նաև վեպի բովանդակային, սյուժետային տարրերում:

«Հոքսմուր» վեպի 18-րդ դարի սյուժետային գիծը պատմում է Նիքոլաս Դայեր անունով մի ճարտարապետի և Լոնդոնի հրդեհից հետո յոթ եկեղեցիներ կառուցելու նախագծի իրականացման մասին: Այստեղ երևան են գալիս ժամանակաշրջանի Լոնդոնի կյանքից մի շարք հայտնի ճարտարապետների կերպարներ, որոնցից ամենանշանակալիցն են սըր Ջոն Վանբրուգը և քաղաքի երբևէ գոյություն ունեցած հավանաբար ամենախոշոր ճարտարապետ սըր Ք. Ռենը: Վեպում նկարագրված յոթ եկեղեցիները պատկանում են 18-րդ դարի թերձանաչված մի ճարտարապետի՝ Նիկոլաս Հոքսմուրին, որից էլ ներշնչված է Դայերի կերպարը: Այս պարագայում նույնպես Աքրոյդը դիմել է տրոհման ու միակցման սկզբունքին. 18-րդ դարի պատումային գծի կենտրոնական կերպարին անվանում է Նիկոլաս Դայեր, իսկ Հոքսմուր անունն է կրում 20-րդ դարի սյուժետային գծի կենտրոնական դեմքը՝ հետախույզ Նիկոլաս Հոքսմուրը: Այսպիսով միևնույն պատմական անձին Աքրոյդը փաստացիորեն տրոհում է երկու մասի՝ տեղավորելով երկու առանձին պատումներում, ինչով և բացատրվում են երկու կերպարների միջև ընդհանրություններն ու տարբերություններ:

Ճարտարապետ Նիկոլաս Դայերը էքսցենտրիկ անհատականություն է, որը հակադրվում է իր ժամանակաշրջանի և դրա գաղափարների ու փիլիսոփայական միտումներին: 18-րդ դարի լուսավորչական մտավորականությունը ստեղծել է մի նոր արժեհամակարգ՝ հիմնված բանականության գերակայության ու ուտիլիտարիզմի վրա, ոգեշնչված գիտական բացահայտումների ընձեռած բազմաթիվ հնարավորություններով, որ տանում է դեպի կյանքի նյութական որակի բարելավում և դրա շնորհիվ մարդկության

<sup>182</sup> Ackroyd P. *Hawksmoor*. London. Abacus. 1986. P. 26

<sup>183</sup> Green A. *London in Space And Time: Peter Ackroyd and Will Self*/English Teaching: Practice and Critique. September, 2013, Volume 12, Number 2. p 37

անխուսափելի առաջընթացի: Մարդկությանը խավարից դեպի լույս տանելու ոգով են տոգորված Ք. Ռենը և Ջ. Վանբրուգը: Ամբողջովին այլ է Դայերն իր աշխարհայացքով ու մտորումներով: Նա ոչ միայն համոզված է, որ բանական փիլիսոփայությունը չի նպաստի բարոյապես իդեալական հասարակության հաստատմանը, այլև խորին նողկանք է տածում լուսավորական արժեքների և դրանց քաղքենի կրողների հանդեպ, ծաղրում է նրանց մոլորությունը՝ համոզված, որ «*աշխարհը նեխած է, փչացած*»<sup>184</sup>, և ոչինչ ի գորու չէ մաքրել մարդկությանը պատած բորբոսը:

Դայերը խորշում է լուսավորիչ մտավորականների դավանած արժեքների ու նրանց արարքների հակասությունից, համոզմունքների մեջ իրենց թվացյալ կայունությունից, և համոզված է, որ այն նրանց ոչ մի կերպ չի ազատում հոգու թշվառությունից:

Հոռետեսությունից ծնված ճգնաժամի հետևանքով Դայերը տարվում է «սև արվեստներով», միանում Լոնդոնի՝ մարդկային գոհաբերություններ անող գաղտնի սատանիստական մի պաշտամունքի, ընթերցում Միջնադարի ու Վերածննդի օկուլտիստական փիլիսոփայության բազմաթիվ աշխատություններ և, մերժելով Լուսավորության՝ արվեստում գուսպ և ձևային կատարելության տանող ռացիոնալիստական սկզբունքները, մշակում է այլ ճարտարապետական հմտություններ՝ ոգեշնչված սև մոգությունից, զանազան միստիկական և էզոթերիկ տեսություններից, հինավուրց պաշտամունքներից, համոզված, որ իր եկեղեցիները ոտքի են կանգնելու՝ կյանելով չարիքի այն շունչն ու ոգին, որ ինքն է փոխանցելու «իր ստվերի միջոցով»: Որպես հակադրություն լույսին ու բանականությանը՝ նա դիմում է ստվերների ու խավարի պաշտամունքին. «*Միայն խավարն է ի գորու ձև ու մարմին տալ իմ աշխատանքին*»:<sup>185</sup> Սակայն եկեղեցիների կառուցումն ամբողջական չի կարող լինել առանց գոհաբերության արարողության: Իսկ դրա համար անմեղ ոգիներ են պետք՝ երեխաներ: Այսպես իր յոթ եկեղեցիների համար Դայերը գոհաբերում է յոթ երեխաների ու թաղում նրանց խորանների տակ: Նա համոզված է, որ մարդկային գոհի շնորհիվ քարը կշնչավորվի ու կապրի հավիտյան: Մրանով նա հակադրվում է իր գործընկեր ճարտարապետներին, ովքեր իրենց արվեստում՝ առաջնորդվում են նոր բանական փիլիսոփայության սկզբունքներով՝

<sup>184</sup> Ackroyd P. *Hawksmoor*. London. Abacus. 1986. P.85

<sup>185</sup> Նույն տեղում, էջ 5

զերծ միաստիկ սնոտիապաշտությունից: Այսպիսով Աքրոյդը հակադրում է Դայերի միաստիցիզմը, որ զանազան մոռացված հինավուրց կրոնների ու պաշտամունքային դպրոցների համագումարն է, լուսավորության բանականությանը:

Արվեստի կատարյալ գործ ստեղծել, ըստ Դայերի, ի վիճակի է միայն ոգեշնչումը՝ անկախ ու ազատ ցանկացած նորաձև մտքից: Դայերը չի ընդունում նաև եկեղեցին՝ որպես կրոնական ինստիտուտ, ծաղրանքով է վերաբերվում հոգևորականների ինքնաբավ միջակությանն ու տգիտությանը: Նա իրեն ազատ է զգում ցանկացած ինստիտուցիոնալ կապանքից: Կարելի է ասել, որ նա իր տեսակի մեջ անարխիստ է:

Դայերի՝ իր ժամանակի բարքերի ու միտումների այս կատարյալ հերքողականությունը բազմաթիվ գրական զուգադրումներ է առաջացնում և առաջին հերթին 19-րդ դարավերջի ֆրանսիացի դեկադենտ, էսթետ Ժորիս-Կարլ Հյուսիմանսի հերոսների հետ: Այսպես՝ «Հոսանքին հակառակ» վեպի գլխավոր հերոս դեզ Էսենտը, մերժելով հասարակության առաջընթացի կասկածելի հեռանկարն առաջարկող արժեքները, որոնք, ըստ նրա, քաղքենի բուրժուականության երկունքն են և իրականում կոծկում են հենց այդ հասարակարգի ստոր, հոռի բարքերը, փակվում է գեղարվեստի եզակի նմուշներով, զանազան զարդանախշերով, պաճուճանքի արտասովոր լուծումներով իր առանձնատան մեջ ու ամբողջությամբ տրվում էսթետիկական ըմբռնչվածություններին: Ավելի խորն է ընդհանրությունը Հյուսմանսի «Ներքևում» վեպի հերոս Դյուրթալի հետ, որը նույնպես դարաշրջանի նյութապաշտությունից ու բուրժուաների անզույն կենսակերպից հոգնած, տրվում է սև արվեստներին, սատանիզմին ու օկուլտիստական փիլիսոփայության ուսումնասիրությանը: Այստեղ, ինչպես և «Հոքսմուրի» մեջ, գործում է կերպարների երկակիության ու նույնացման սկզբունքը:

Այսպիսով, «Հոքսմուր» վեպում 20-րդ դարում կատարվող իրադարձությունները ծավալվում են դարեր առաջ Նիկոլաս Դայերի կառուցած եկեղեցիներում տեղի ունեցած առեղծավածային սպանությունների հետաքննության շուրջ: Եվ այդ գործին է լծված հետախույզ, Դայերի անվանակից Նիկոլաս Հոքսմուրը: Բոլոր զոհերը կա՛մ երեխաներ են, կա՛մ պահպանել են «երեխայական մաքրությունը»: Մրանով առեղծվածային կապ է ստեղծվում ներկա ժամանակի սպանությունների և դարեր առաջ Դայերի կատարած զոհաբերությունների միջև: Ներկայում անցյալի դեպքերին ոչ մի հղում

չի արվում: Այստեղ անցյալը լռում է, մնացել է փակված նախորդող գլխի մեջ: Իսկ 18-րդ դարի հերոսները վերածվել են քարերի, արձանների քաղաքային տարածության մեջ: Հոքսմուրն իր հետաքննության մեջ ներկայի և 18-րդ դարի սպանությունների միջև որևէ միաստիկ կապ չի տեսնում: Մի պահ նա նույնիսկ բացահայտում է ենթադրյալ կասկածյալին՝ իրեն հետապնդող մի սևազգեստ անծանոթի: Մակայն վեպի հանգուցալուծման մեջ այս բացահայտումը ոչ մի որոշիչ դեր չի խաղում: Էլեմենտար դետեկտիվը, որի ողջ նպատակը մարդասպանին բացահայտելն է, դուրս է Աքրոյդի գեղարվեստական պլանից: Վեպում կենտրոնական դեր է կատարում ժամանակի խնդիրը, ուստի հեղինակի նպատակը ոչ թե սպանության բացահայտումն է, այլ ժամանակի մետաֆիզիկական արտաբերումները ցույց տալը:

20-րդ դարում լուսավորական գաղափարները հաղթանակ են տարել, գիտական նվաճումները թևածում են ամենուրեք, կրիմինալիստական նոր մեխանիզմներ են գործում, տեխնոլոգիական հրաշքներ, որոնց ականատես է Հոքսմուրը, և որոնց հանդեպ որոշակի կասկածանք է զգում: Նիկոլաս Դայերի ոգին մեռել է, նրա՝ չարիքով ներծծված եկեղեցիները ոչ ոք չի հիշում, Դայերն ու իր սպանությունները մատնվել են կատարյալ մոռացության: Օտարացման, ճնշվածության, մոռացության ու ամենուրեք տիրող տափակության այս մթնոլորտում Հոքսմուրը, այցելելով Լոնդոնի խուլ, աղքատ թաղամասեր, ականատես է լինում լոնդոնյան իրականության տարբեր սարսափների, և հասկանում, որ իրեն շրջապատող կատարյալ ու անսասան թվացող աշխարհը լի է տառապանքներով:

Կհամաձայնենք տեսաբան Ա. Մենտովի հետևյալ մտքին. *«Հենվելով գիտության, ժամանակակից տեխնոլոգիաների, պատճառի ու հետևանքի սկզբունքի, նյութական ապացույցի վրա՝ Հոքսմուրը փակված է մնում ներկայում՝ անկարող տեսնել անցյալն ու գուշակել ապագան»*:<sup>186</sup> Նա կորցնում է ընկերներին և սկսում է տարօրինակ ձայներ լսել, ձայներ անցյալից՝ մոռացված, կորուսյալ անցյալից: Հետևելով որոշ նշանների՝ նա կրկին այցելում է յոթ եկեղեցիներ և պարզում, որ դրանք կառուցված են որոշակի աստղագիտական սկզբունքով, և այստեղ նրա առաջ սկսում է վերակենդանալ անցյալի Լոնդոնը: Փաստորեն Դայերի ոգին կարծես նորից ծնվում է: Կոտրվում է ներկայի ու անցյալի միջև անջրպետը, ու անցյալն սկսում է շրջել

---

<sup>186</sup> <http://facta.junis.ni.ac.rs/lal/lal2009/lal2009-10.pdf>. Sentov A. The Postmodern Perspective of Time in Peter Ackroyd's Hawksmoor. p. 131

ներկայի մեջ: Լոնդոնյան ճարտարապետությունը, որ իր մեջ բանտարկել է անցյալի ոգին, ազատություն է տալիս նրան: Այսպիսով, ճարտարապետությունն է կամրջում ներկան ու անցյալը:

Նման պայծառացումներ է ունենում նաև Դայերն անցյալում, նա էլ է ձայներ լսում ապագայից, իր աշխարհն էլ է ցնցվում, Հոքսմուրի շնորհիվ: Այսպիսով, Հոքսմուրն ու Դայերը տարբեր ժամանակներից տեսնում են միևնույն պատկերները և փաստորեն սկսում են նույնանալ: Կարող ենք եզրակացնել, որ Հոքսմուրը Դայերի վերապրումն է 20-րդ դարում, նրա առավել զուսպ, ներկա ժամանակի օրենքներին ու պահանջներին համակերպված երկվորյակը: Քարերը կրում են անցյալի շունչը, իսկ նրանց հսկում է Դայերի ստվերը:

Այսպիսով, վեպի հիմնական և կարևորագույն հատկանիշը քաղաքային ճարտարապետության միստիֆիկացիայի միջոցով տարածության մեջ երկու ժամանակային իրականությունները միավորելն է, տարածության միջոցով անցյալի ոգին վերածնելը:

*Bagrat Avetisyan*

#### **THE TRANSFORMATIONS OF TIME IN *HAWKSMOOR* BY PETER ACKROYD**

**Keywords:** *Hawksmoor, blacks arts, occultism, space and time, Enlighthement, rationalism, mysticism, Huysmans, London*

The article examines the form, the narrative and the structure of the novel *Hawksmoor* by English novelist P. Ackroyd, as well as the ambiguities and the transformations of such thematic elements as space and time, the mystical nature of time. London's architecture plays an important role in the novel, as an embodiment of the past, an entity that preserves the memory about the past in the present, thus becoming a bridge between the two different temporal realities.

*Баграт Аветисян*

#### **ТРАНСФОРМАЦИИ ВРЕМЕНИ В РОМАНЕ П. АКРОЙДА «ХОКСМУР»**

**Ключевые слова:** *Хоксмур, черная магия, оккультизм, время и пространство, Просвещение, рационализм, мистицизм, Гюисманс, Лондон*

В статье рассматриваются форма, структура, различные повествовательные приемы в романе английского писателя П.Акройда «Хоксмур», а также время и пространство, трансформация и переосмысление времени. В романе особенно важна роль архитектуры, как воплощения прошлого и носителя воспоминания о нем в настоящем. Таким образом, архитектура воспринимается как мост между прошлым и настоящим.

## ГУМАНИСТИЧЕСКАЯ ТРАДИЦИЯ В ПОВЕСТИ Б. ТАРКИНГТОНА «ПРИКЛЮЧЕНИЯ ПЕНРОДА»

*Ключевые слова:* гуманизм, нравственность, деловой роман, американская мечта, повесть, успех, власть.

